

ՈՒՍՈՒՆԳԻ ՃԵՌՆԱՐԿ

11

ԻՆչպէս ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՂ ԱՍՏՎԱԾԱՉՈՒՆՆԵՐ

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն
Աստվածաշնչի ուսումնասիրության համար



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն
Աստվածաշնչի ուսումնասիրության համար

Չեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն

Աստվածաշնչի ուսումնասիրության համար

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

Յեդինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հոչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *How to Study the Bible*, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 12-2018

Ինչպե՞ս ուսումնասիրել Աստվածաշունչը

Սովորել, թե ինչպես վայելել Աստվածաշնչի անձնական ուսումնասիրությունը, կարող է իսկական մարտահրավեր լինել նորադարձ քրիստոնյաների, ինչպես նաև՝ հների համար: Այս դասընթացի հիմնական նպատակն է սկսել հիմք դնել Աստվածաշնչի ուսումնասիրության լավ սովորություններ զարգացնելու համար: Մենք ցանկանում ենք օգնել նրանց տեսնելու, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը կարող է լինել գործնական, հետաքրքիր և շատ օգտակար իրենց հոգևոր աճի համար:

1

Գլուխ 1. Սկսել Աստվածաշնչի ուսումնասիրության հիմունքներով

Դասընթացի այս հատվածը շատ ընդհանրական ներածություն է տալիս Աստվածաշնչի ուսումնասիրության մասին՝ սկսելով քննարկումից, թե ինչու է մեզ համար կարևոր ուսումնասիրել Աստվածաշունչը: Մենք նաև թռուցիկ հայացք կգցենք տարբեր աղբյուրների վրա, որոնք կարող են օգնել Աստվածաշնչի ուսումնասիրությունը ավելի օգտակար դարձնելու համար:

2

Գլուխ 2. Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնել իմ կյանքում

Սա դասընթացի մի շատ կարևոր հատված է, որը քննարկում է Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերը: Մենք ցույց ենք տալիս, թե ինչպես այս երեք քայլերը կարող են և պետք է օգտագործվեն Աստվածաշնչի ուսումնասիրության յուրաքանչյուր մեթոդի հետ:

3

Գլուխ 3. Աստվածաշնչի անձնական և խմբային ուսումնասիրություն

Ցանկացած քրիստոնյայի համար, միգուցե, ամենանշանակալի անձնական կիրառություններից մեկն ամենօրյա անձնական պաշտամունքի ժամանակն է: Մենք նաև ուշադրություն ենք դարձնում ընտանեկան պաշտամունքի և Աստվածաշնչի խմբային ուսումնասիրության վրա:

4

Գլուխ 4. Աստվածաշնչի ուսումնասիրության մեթոդներ

Դասընթացի այս մասը հետազոտում է Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ: Ուսանողներին հնարավորություն է տրվում փորձարկել այդ մեթոդներից որոշ մասը: Հատուկ ուշադրություն է դարձվում Աստծո Խոսքն անգիր անելու և դրա շուրջ մտածելու վրա:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* -ի մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերազանահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս Աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզված եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել

3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շաբթը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շաբթը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ:

Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք, ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թոուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Մեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գիրքը:

Դասի ծրագրեր ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի ընդհանուր նկարագրություն

1. Առաջին դասաժամից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես դասընթացը ներկայացնել ուսանողներին և տալ նրանց առաջին հանձնարարությունները: Ուսուցման ուղեցույցի առաջին նախագիծը պետք է լրացված լինի նախքան առաջին դասաժամը: Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկները և թող նրանք կարդան Առաջին գլուխը, որը կքննարկվի առաջին դասաժամին:

Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջի՝ *«Քրիստոնեական աճի պատկեր»*-ը կլինի առաջին դասաժամի քննարկման հիմնական մասը: Դու կարող ես նրանց ասել, որ լրացնեն հնարավորինս շատ՝ մեծ մասը, եթե ոչ ամբողջը՝ նախքան առաջին դասաժամին գալը:
2. Դու պետք է որոշես, թե քանի դասաժամ ես օգտագործելու այս դասընթացն ուսուցանելու համար: Կան դասի ծրագրեր հինգ դասաժամի համար (5-րդ դասը ստուգարքն է): Ի դեպ, այս դասընթացը կարող է ընդարձակվել մի քանի անգամ ավել դասաժամերի, եթե ժամանակ ունես: Եթե դու որոշես հինգ դասաժամից ավելին անել, կարող ես 5-րդ և 6-րդ նախագծերը հանձնարարել հատուկ դասաժամի համար, ոչ թե դրանք դարձնել այլընտրանքային:
3. Մույն Ուսուցչի ձեռնարկում՝ հաջորդ էջում կա *Դասարանական հանձնարարության ցուցակի* մի օրինակ, որտեղ նշված են ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող նրանք արտագրեն այդ համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ օրինակը, որը գտնվում է իրենց՝ Ուսանողի ձեռնարկի վերջում:

Խնդրում եմ, հաշվի՛ առ, որ Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդի հանձնարարությունն Ուսուցման ուղեցույցի մեջ ներառված չէ: Մանրամասն ցուցումները գտնվում են ԻՈՒԱ-Ուսուցչի ձեռնարկի 42-43-րդ էջերում՝ 13. Բ. կետում:
4. Դասի յուրաքանչյուր ծրագիր ներկայացնում է մեկ կամ ավելի «Դասի ջերմացման գործողություն», որը դու կարող ես օգտագործել դասի սկզբում: Այս գործողությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին, որպեսզի իրենց ուշադրությունը կենտրոնացնեն տվյալ դասի հիմնական թեմայի վրա: Մենք ուզում ենք ջերմության և անկեղծության մթնոլորտ ստեղծել, որտեղ բոլոր ուսանողները իրենց ազատ կզգան դասի քննարկմանը մասնակցելու հարցում:
5. Այս դասընթացը հատուկ առաջադրանք է դնում ուսուցչի առաջ. ինչ էլ որ անես, հետաքրքրի՛ր արա: Աստվածաշնչի ուսումնասիրությունը կենսական բան է, որը բոլոր քրիստոնյաները պետք է զարգացնեն, եթե ուզում են հոգևորապես հասուն քրիստոնյա դառնալ: *Խմբային ուսուցումներ նորադարձ*

քրիստոնյաների համար շարքի մյուս դասընթացներից որոշ մասը, հավանական է, ավելի հետաքրքրություն և քննարկում կառաջացնի՝ ուսանողների վրա ունեցած անմիջական ազդեցության պատճառով:

Այս դասընթացն ուսուցանի՝ իսանդավառությամբ և, ամենակարևորը, գործնական դարձրու այն: Օգտագործի՝ ըբազմաթիվ անձնական օրինակներ և պատկերավոր օրինակներ, որպեսզի այն չդառնա Աստվածաշնչի ուսումնասիրության ձանձրալի և հոգնեցուցիչ դասախոսություն:

Այս դասընթացի համար կարևոր նպատակ է՝ ցույց տալ, որ Աստված կարող է հույս բերել նրանց կյանքում՝ անկախ նրանց անցյալից: Մենք ուզում ենք, որ նրանք բացահայտեն Աստծուց և Նրա Խոսքից սովորելու ձևեր:

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը _____ Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը _____

Հարցաշար	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	Մարկոս 4:24	օր 2.
2	Բ Կորնթացիներին 8:11	օր 4.
3		

Նախագծեր	Ամիս, ամսաթիվ
1	օր 1. Իմ կարծիքն Աստվածաշնչի ուսումնասիրության վերաբերյալ: _____
2	օր 2. Իմ սթրեսային իրավիճակները: _____
3	օր 3. Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերը: _____
4	օր 3. Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր: _____
5	օր 4. կամ 5 Համարի ուսումնասիրություն: _____
6	այլընտրանքային Փնտրել Աստծուն _____
Աստվածաշնչի ԱՀԱԿ ուսումնասիրություն _____ օր 4. _____	

Ստուգարք Ամսաթիվ _____ օր 5. _____

Դաս 1.

Սկսել Աստվածաշնչի ուսումնասիրության հիմունքներով

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է Աստվածաշնչի իմ անձնական ուսումնասիրությունն օգտագործեմ որպես գործիք, որը կարող է ինձ օգնել՝ աճելու և ավելի մոտենալու Աստծուն:

2. Բանալի համար. Սաղմոս 119:105.

«Քո Խոսքը ճրագ է իմ ոտքերին ու լույս՝ շավիղներին»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի առաջին գլուխը համընթաց է այս դասի հետ: Նախագիծ 1-ինը՝ «Իմ կարծիքն Աստվածաշնչի ուսումնասիրության վերաբերյալ», նույնպես կարող է օգտագործվել այս դասի ժամանակ:

4. Դասի ջերմացման գործողություն. «Սովորել սթեյք պատրաստել» (3-4 րոպե):

Օգտագործի՛ր հետևյալ պատկերավոր օրինակը՝ բացատրելու համար այս դասընթացի հիմնական նպատակը:

Պատկերավոր օրինակ. «Սովորել սթեյք պատրաստել»:

Քո ուսանողներին խնդրի՛ր, որ մտքում պատկերացնեն տավարի մսի մի մեծ, հյութալի, փափուկ կտոր: Անգամ կարող ես մի հում սթեյք բերել դասարան այս օրինակի համար: Բայց եթե օգտագործելու համար իսկական հում սթեյք չունես, կարող ես քո ուսանողներին խնդրել, որ հում սթեյք նկարեն: Այնուհետև խնդրի՛ր նրանց, որ պատկերացնեն, թե ինչքան հաճելի կլինե՞ր դա ուտելը, եթե իրենց սիրած ձևով պատրաստված լինե՞ր:

Հում սթեյք ուտելը հաճելի մի բան չէ: Դու (կամ ցանկացած մեկը) պետք է նախապես պատրաստես՝ եփես այն: Որից հետո միայն կվայելես, և քո մարմինն էլ կօգտվի դրանից:

ՆՇՈՒՄ. այս նույն օրինակը կարելի է բերել ուրիշ ուտելիքների վերաբերյալ: Ուսուցիչներից մեկը բերել էր մի աման հում բրինձ և, պտտելով դասարանում, հորդորում էր ուսանողներին ուտել դրանից՝ նախքան եփելը:

1

Մեկ այլ ուսուցիչ բերել էր երկու հում ձու՝ նույնը կրկնելով: Նա նաև նշել էր, որ ձվի մեջ եղած պրոտեինը մարդու մարմնում կարող է մարսվել միայն ձուն եփելուց հետո: Սա հետաքրքիր հոգևոր զուգահեռներ ունի այն բանի հետ, ինչը մենք ուզում ենք փոխանցել այս դասին:

Կիրառում:

Այն, ինչ մենք անելու ենք այս դասին, կարող է համեմատվել սթեյք պատրաստելու հետ: Մենք սովորելու ենք, թե ինչպես ուսումնասիրենք Աստվածաշունչը: Սթեյք եփել իմանալը չի հագեցնի քո քաղցը կամ լցնի քո ստամոքսը: Սակայն երբ դու արդեն պատրաստել գիտես, կարող ես հում սննդամթերքը վերածել համեղ խորտիկի: Այս դասընթացը ծրագրված է, որպեսզի քեզ սովորեցնի, թե ինչպես վերցնես Աստծո Խոսքը և դրանից հոգևոր սնունդ ստանաս, որը քեզ կօգնի աճել և դառնալ հաջողակ քրիստոնյա:

Դասընթացը նաև կարող է դառնալ ամենակարևորներից մեկը այն ազդեցության պատճառով, որը կունենա քո մնացած ողջ կյանքի վրա:

5. Ի՞նչ նկատի ունենք մենք՝ «ուսումնասիրել Աստվածաշունչը» ասելով (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 4-րդ:

Քո ուսանողներին ուղղորդի՛ր, որ բացեն Ուսանողի ձեռնարկի 4-րդ էջը, որտեղ՝ էջի սկզբում, կա ներածական պարբերություն, որը բացատրում է այս դասի ընդարձակ ընկալումը:

Երբ խոսում ենք «Աստվածաշնչի ուսումնասիրության» մասին, մենք «ուսումնասիրել» բառն օգտագործում ենք ընդհանրական ձևով: Այդ բառն ասելով՝ նկատի ունենք ցանկացած ժամանակը, երբ կարդում ենք, անգիր անում, մտածում կամ հետազոտություն անում Աստվածաշնչի որևէ հատվածի վերաբերյալ: Սա կարող է նշանակել՝ Աստվածաշնչի վրա օգտագործել մեկ րոպե կամ հինգ ժամ:

**Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 4-րդ էջից.
«Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը»:**

Ասա՛ նրանց, որ այս դասընթացում մեր առաջնային նպատակը կլինի Աստվածաշնչի անձնական ուսումնասիրության համար ամենօրյա ժամ հաստատելը, որին հաճախ հղում կանենք՝ որպես անձնական պաշտամունքի:

6. Հարցազրո՞ւյց անցկացրու այս դասարանն ավարտածներից մեկի կամ մի որևէ քրիստոնյայի հետ, ով պարբերաբար Աստվածաշունչ է ուսումնասիրում (5-10 րոպե):

1

Տարբերակ Ա. Եթե դու սա ուսուցանում ես Թին Չելենջի շրջանակներում:

Հարցազրո՞ւյց անցկացրու Թին Չելենջն ավարտածներից մեկի հետ այն բանի վերաբերյալ, թե ինչո՞ւ է նա Աստվածաշունչ ուսումնասիրում, և թե որքանո՞վ է կարևոր Աստվածաշնչի ուսումնասիրությունը նրա կյանքում: Եթե տվյալ անձնավորությունն ի վիճակի չլինի դասարան գալ կենդանի հարցազրույցի համար, նախապես ծրագրի՛ր և տեսաձայնագրի՛ր այդ հարցազրույցը: Հորդորի՛ր այդ անձնավորությանը՝ անկեղծ լինել և «չքաղցրացնել» իր պատասխանները, որպեսզի քո դասարանի նորեկ ուսանողների վրա անհրապակյան տպավորություն չթողնի:

Ահա մի քանի հարցեր, որոնք կարող ես օգտագործել քո հարցազրույցի ժամանակ: Փորձի՛ր դա անել առավելագույնը տասը րոպեի սահմաններում:

1. Ինչքա՞ն հաճախ ես դու Աստվածաշունչ ուսումնասիրում հիմա, երբ արդեն դուրս ես եկել Թին Չելենջից:
2. Ինչքանո՞վ է կարևոր Աստվածաշնչի ուսումնասիրությունը հիմա, երբ արդեն դուրս ես եկել Թին Չելենջից:
3. Ինչպե՞ս ես դու այսօր օգտակար մի բան վերցնում Աստվածաշնչի ուսումնասիրությունից: Ինչքանո՞վ է Աստվածաշնչի քո ուսումնասիրությունը կիրառելի քո օրվա ընթացքում:
4. Դժվա՞ր էր արդյոք Աստվածաշնչի ուսումնասիրությունը քեզ համար, երբ դու Թին Չելենջում ուսանող էիր: Այն ձանձրալի՞ էր: Դժվա՞ր էր Աստվածաշնչի ուսումնասիրությունից ինչ-որ օգտակար բան վերցնելը:
5. Ի՞նչ ազդեցություն էր ունենում Աստվածաշնչի ուսումնասիրությունը քո կյանքի վրա, երբ դու Թին Չելենջում ուսանող էիր:
6. Ի՞նչ քաջալերանք դու կփոխանցեիր Թին Չելենջի ուսանողներին՝ ներկայում Աստվածաշնչի ուսումնասիրության նրանց սովորությունների վերաբերյալ:

1

Տարբերակ Բ. Եթե դու դա ուսուցանում ես տեղական եկեղեցու շրջանակներում:

Հարցազրույցի համար փորձե՛ք գտնել այնպիսի մարդու, ում քո դասարանը դրական ձևով կընդունի: Եթե դու դա ուսուցանում ես մեծահասակների դասարանում, ովքեր վերջերս են դարձել ճշմարիտ քրիստոնյա, ապա կարող ես ընտրել այնպիսի մարդու, ով երեք կամ չորս տարի առաջ է ընդունել Հիսուսին և այնքան էլ հեռու չէ հոգևոր այն աստիճանից, որի վրա այս պահին գտնվում են քո ուսանողները:

Եթե դու սա ուսուցանում ես պատանիների կամ երիտասարդների խմբում, կարող ես հարցազրույցի հրավիրել մեկին, ով ուսանողական տարիքի է (ով դեռևս հիշում է, թե ինչ է նշանակում պատանի լինել):

Հարցազրույցի կենտրոնացումն այն բանի վրա է, թե ինչու է տվյալ անձը Աստվածաշունչ ուսումնասիրում, և որքանով է կարևոր Աստվածաշնչի ուսումնասիրությունը նրա կյանքում: Եթե տվյալ անձնավորությունն ի վիճակի չլինի գալ դասարան՝ կենդանի հարցազրույցի համար, նախապես ծրագրի՛ր և տեսաձայնագրի՛ր այդ հարցազրույցը: Քաջալերի՛ր այդ անձնավորությանը՝ անկեղծ լինելու և իր պատասխանները «չքաղցրացնելու» համար, որպեսզի քո դասարանի նորեկ ուսանողների վրա անիրական տպավորություն չթողնի:

Ահա մի քանի հարցեր, որոնք կարող ես օգտագործել հարցազրույցի ժամանակ: Փորձի՛ր դա անել առավելագույնը տասը բոլորի սահմաններում:

1. Ինչքա՞ն ժամանակ է, որ դու քրիստոնյա ես:
2. Ինչքա՞ն հաճախ ես Աստվածաշունչ ուսումնասիրում:
3. Ինչքանո՞վ է կարևոր Աստվածաշնչի ուսումնասիրությունը քո կյանքում հիմա:
4. Ինչպե՞ս ես օգտվում Աստվածաշնչի քո ուսումնասիրությունից: Ինչքանո՞վ է Աստվածաշնչյան քո ուսումնասիրությունը կիրառելի քո կյանքում:
5. Դժվա՞ր էր արդյոք Աստվածաշնչի ուսումնասիրությունը քեզ համար, երբ դու այդ նույն տարիքում էիր կամ հոգևոր աճի նույն աստիճանն ունեիր, ինչ այս դասարանի ուսանողները: Այն ձանձրալի՞ էր: Դժվա՞ր էր Աստվածաշնչի ուսումնասիրությունից ինչ-որ օգտակար բան վերցնելը:



6. Ի՞նչ ազդեցություն էր ունենում Աստվածաշնչի ուսումնասիրությունը քո կյանքի վրա, երբ դու այդ նույն տարիքում էիր կամ հոգևոր աճի նույն աստիճանն ունեիր, ինչ այս դասարանի ուսանողները:
7. Ի՞նչ քաջալերանք դու այսօր կփոխանցեիր այս դասարանի ուսանողներին Աստվածաշնչի ուսումնասիրության՝ նրանց սովորությունների վերաբերյալ:

7. Ներկայացրո՛ւ «Քրիստոնեական աճի պատկեր» աղյուսակը (15-20 բույլ*), Ուսանողի ձեռնարկ, 5-8-րդ էջեր:

*Մա այն ամբողջ ժամանակն է, որը պետք է հատկացնել այս դասի ծրագրի 7-12-րդ կետերին՝ նշյալ աղյուսակը քննարկելու համար:

Նախքան Աստվածաշնչի ուսումնասիրության մեթոդներին հատուկ անդրադառնալը՝ մենք պետք է հետհայացք գցենք և դիտարկենք մեր քրիստոնեական կյանքի ընդհանրական պատկերը:

Դու կարող ես այս աղյուսակը ցուցադրել PowerPoint-ի կամ թափանցիկ սլայդի միջոցով, կամ էլ կարող ես այն փակցնել գրատախտակին՝ դասարանական քննարկման ժամանակ օգտագործելու համար: Թող ուսանողները հղում անեն Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջում գտնվող նույնանման աղյուսակին և լրացնեն դատարկ տեղերը:

Այս աղյուսակի նպատակն է՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը դարձնել քրիստոնյայի ամբողջական կյանքն ապրելու հիմքը: Աստվածաշնչի ուսումնասիրությունը (լինի անձնական կամ խմբային) միջոց է քեզ օգնելու համար, որպեսզի աճես և ավելի մոտենաս Աստծուն: Այն ինքն իրենով վերջնական չէ:

8. Բացատրություն. աղյուսակի Ա. կետ. «Որտե՞ղ ես դու այսօր» (2-3 բույլ), Ուսանողի ձեռնարկ, էջ 6-րդ:

Սկսի՛ր այն գիտակցությունից, որ մենք բոլորս հոգևորապես աճելու կարիք ունենք, և դա մեր ամբողջ կյանքի համար է: Եթե ուզում ենք առաջընթաց ունենալ, սկզբում պետք է հասկանանք, թե որտեղ ենք մենք այսօր: Հորդորի՛ր քո ուսանողներին, որ լրացնեն Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջի ներքևում գտնվող՝ Ա. Կետին հարող դատարկ տեղերը:

Պատասխանների օրինակներ. Կոտրված լինելու, կախվածության, բարկության հետ խնդիր, նորադարձ քրիստոնյա, վիճակներ՝ շփոթված, մարդկանցից վիրավորված, հույսով լի, խաղաղ:

1

9. Բացատրություն. աղյուսակի Բ. կետ. «Որտե՞ղ է Աստված ուզում, որ դու լինես» (2-3 բույլ), Ուսանողի ձեռնարկ, 6-7-րդ էջեր:

Մատնանշի՛ր, որ նույնիսկ Հիսուսն աճեց Իր երկրավոր կյանքում: Ղուկաս Ավետարանի 2-րդ գլուխը պատմում է մի դեպքի մասին, երբ Հիսուսը 12 տարեկան էր: **Ղուկաս 2:52-ն ասում է. «Եվ Հիսուսը զարգանում էր իմաստությամբ ու հասակով՝ շնորհ գտնելով Աստծո և մարդկանց առջև»:**

Աստված ծրագիր ունի մեր կյանքի համար, որ լցված է հույսով. Երեմիա 29:11: Քաջալերի՛ր քո ուսանողներին՝ լրացնելու համար Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջի Բ. կետում գտնվող դատարկ տեղերը: Օգնի՛ր նրանց, որ աճի վերաբերյալ արտահայտվելու գործնական բառեր գտնեն: Ի՞նչ է նշանակում «քրիստոնեական աճ» ունենալ: Ի՞նչը կտարբերվեր քո կյանքում, եթե դու գտնվեիր այս աղյուսակի գագաթին:

Պատասխանների օրինակներ. հասուն, կայուն, նորոգված մտքով, Աստծո կամքը կատարող, հնազանդ, սիրող, հաստատուն, խաղաղ, փորձությունները հաղթող:

10. Բացատրություն. աղյուսակի Գ. կետ. «Երկարաժամկետ նպատակներ» (5 բույլ), Ուսանողի ձեռնարկ, էջ 6-րդ:

Սկզբում բացատրի՛ր քրիստոնյայի երեք երկարաժամկետ նպատակները.

1. Աճի՛ր՝ Աստծուն ավելի մոտ լինելու համար (ապրի՛ր քրիստոսակերպ կյանքով):
2. Օգնի՛ր մյուսներին (քրիստոնեական ծառայություն):
3. Հաղթահարի՛ր քո կյանքին տիրող խնդիրները:

Բացատրի՛ր, որ կարիք կա հավասարակշռված աճ ունենալ վերոնշյալ նպատակներում ներկայացված բոլոր երեք ասպարեզներում:

Մատնանշի՛ր, թե որտեղ եմ ես այսօր աղյուսակի ներքևում, և սլաքը, որը ցույց է տալիս, թե Աստված որտեղ կուզենար, որ ես լինեի: Մա մի ակնթարթի ցատկ չէ: Աստված մեզնից ամենօրյա աճ է ակնկալում:

Բարձրացրո՛ւ այս հարցը. «Ինչպիսի՞ վերաբերմունք ունեմ ես քրիստոնյա լինելու առումով»: Ես ուզո՞ւմ եմ աճել: Ես ուզո՞ւմ եմ հետևել Հիսուսի օրինակին: Ինչքա՞ն խորն է իմ ցանկությունը՝ լինել այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է ուզում, որ լինեմ:

Քրիստոնեական աճի պատկեր

Գ. Երկարաժամկետ նպատակներ:

1. Աճի՛ր՝ Աստծուն ավելի մոտ լինելու համար (ապրի՛ր քրիստոսական կյանքով):
2. Օգնի՛ր մյուսներին (քրիստոնեական ծառայություն):
3. Հաղթահարի՛ր քո կյանքին տիրող խնդիրները:



Դ. Միջոցներ, որոնք կարող ես օգտագործել աճելու ժամանակ:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

Բ. Որտե՞ղ է Աստված ուզում, որ դու լինես:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Ե. Առօրյա իրավիճակներ:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____



1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Ա. Որտե՞ղ ես դու այսօր:

Այս աղյուսակի նպատակն է՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը դարձնել քրիստոնյայի ամբողջական կյանք ապրելու հիմքը: Աստվածաշնչի ուսումնասիրությունը (լինի անձնական կամ խմբային) միջոց է՝ օգնելու քեզ, որպեսզի աճես և ավելի մոտենաս Աստծուն:

1

Ուրեմն, ինչպե՞ս կարող եմ աճել՝ Աստծուն ավելի մոտենալու համար: Եթե դու իրոք ուզում ես աճել, Աստված կօգնի քեզ: Շատ կան միջոցներ, որոնք քեզ կօգնեն աճելու համար:

11. Բացատրություն. կետ Դ. «Միջոցներ, որոնք կարող ես օգտագործել աճելու ժամանակ» (5-10 բոլորակ), Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջեր:

Հարցրո՛ւ ուսանողներին. «Որո՞նք են այն միջոցները, որ կարող են մեզ օգնել՝ աճելու համար»: Գրի՛ր նրանց պատասխաններն աղյուսակում:

Առաջարկվող պատասխաններ.

1. Աստվածաշնչի ընթերցանությունը (ուսումնասիրությունը):
2. Աղոթքը:
3. Համարներ անգիր անելը:
4. Եկեղեցի հաճախելը:
5. Վկայելը:
6. Քրիստոնյա ընկերներ ունենալը:
7. Աստծո Խոսքի վրա մտածելը:
8. Հոգևոր գրքերը:
9. Աստվածաշունչը:

Երբ նրանք թվարկեն հնարավոր որոշ միջոցներ, «Աստվածաշունչը» գրի՛ր որպես առանձին միջոց, իսկ «Աստվածաշնչի ուսումնասիրությունը»՝ առանձին: Չափից ավելի մի՛ մանրացիր նրանց առաջարկած միջոցների առումով:

Մատնանշի՛ր, որ այս միջոցները գործիքների պես են և անօգուտ կլինեն, եթե չօգտագործվեն ըստ իրենց նշանակության: Գործիքները ստեղծված չեն նրա համար, որ դրանք՝ որպես գեղեցկություն, կախես պատից, այլ ստեղծված են գործի համար: Այս միջոցները նույնպես, որպես գործիքներ, նախատեսված են ուսանողներին օգնելու համար, որպեսզի հասնեն իրենց «երկարաժամկետ նպատակներին»: Այս միջոցներն օգտագործելու նրանց ունակությունը կազդի այն բանի վրա, թե որքան արագ են նրանք աճում, և որքանով է նրանց աճը հավասարակշռված:

«Որտե՞ղ և ե՞րբ պետք է օգտագործեմ այս միջոցները»: Սույն հարցը տանում է այս աղյուսակի Ե. բաժնին:

**12. Բացատրություն. Ե. կետ. «Առօրյա իրավիճակներ»
(5-10 բառեր) , Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջեր:**

Բացատրի՛ր, որ Աստված ուզում է, որ մենք օգտագործենք այս միջոցները (որոնք գրված են Դ. կետում), որպեսզի օգնի մեզ՝ մեր երկարաժամկետ նպատակներին (որոնք գրված են Գ. կետում) հասնելու համար: Այս բոլորը վերաբերում է մեր առօրյա կյանքին (Ե. կետ): Թող նրանք թվարկեն, թե ինչ են սովորաբար անում իրենց առօրյա կյանքում: Այնուհետև քննարկի՛ր, թե ինչպես կարող են նրանք օգտագործել այս միջոցներն իրենց յուրաքանչյուր արվող քայլում: Հիմնականում կենտրոնացի՛ր երկու միջոցների վրա՝ Աստվածաշնչի և Աստվածաշնչի ուսումնասիրության:

Հարց. Ի՞նչ ես դու սովորաբար անում ամեն օր:

Առաջարկվող պատասխաններ.

1. առավոտյան արթնանալ
2. սենյակը մաքրել
3. ուտել
4. աշխատել
5. դասեր
6. ժամանց
7. ազատ ժամանակ
8. փորձություններ
9. մարդկանց հետ խնդիրներ
10. սթրեսային իրավիճակներ*

*Եթե նրանք չեն թվարկել «սթրեսային իրավիճակներ», ապա դրանք ավելացրո՛ւ այս ցուցակի մեջ: Սթրեսային իրավիճակներն այն իրավիճակներն են, երբ դու քեզ զգում ես լարված, կոտրված, բարկացած, նյարդային, հիասթափված կամ ճնշված այն պատճառով, ինչ ասել կամ արել են քո հանդեպ: Այս իրավիճակները հիանալի հնարավորություն են ընձեռում՝ աճելու և Աստծուն ավելի մոտենալու համար: Մենք այս հարցին մանրամասնորեն կանդրադառնանք ավելի ուշ՝ այս դասընթացին:

1

Համառոտ բացատրի՛ր, որ իրենց առօրյա կյանքի այս փորձությունները հնարավորություն են ընձեռում սովորելու, թե ինչպես դրանց արձագանքել Աստծո ուզած ձևով: Աստվածաշունչ ուսումնասիրելով նրանք կսովորեն, թե ինչպես արձագանքել: Աստվածաշունչ կարդալը մի քայլ է: Շատ ավելի դժվար քայլ է կարդացածը մեր առօրյա կյանքում գործարկելը:

Օրինակ, Աստվածաշունչն ասում է, որ բարի լինենք մեկս մյուսի հանդեպ: Ուրեմն, ինչպե՞ս կարող ես սկսել գործի դնել այս միտքը քո կյանքի ամենօրյա իրավիճակներում: Սա է մարտահրավերը, որը քեզ կօգնի աճել և դառնալ այն անձնավորությունը, որի մասին նշված է աղյուսակի վերևում, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին Աստված է ուզում, որ դու լինես:

13. Անձնակա՛ն դարձրու «Քրիստոնեական աճի պատկեր» աղյուսակը (5 րոպե):

Աղյուսակը ներկայացնելուց հետո առանձին-առանձին քննարկի՛ր, թե ինչու է յուրաքանչյուր ուսանող ուզում Աստվածաշունչ ուսումնասիրել: Օգտագործի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը դասի քննարկման այս հատվածում:

Հարց 6. Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում եմ ես ուզում աճել:

Հարց 7. Ինչպե՞ս ես ուզում, որ Աստվածաշնչի իմ ուսումնասիրությունն ինձ օգնի այս ասպարեզներում (6-րդում նշված):

Այս հարցերին տրված նրանց պատասխանները քեզ պետք է մտքեր հաղորդեն, թե որտեղ են գտնվում քո ուսանողները Աստվածաշնչի ուսումնասիրության կարևորությունը հասկանալու առումով, և քեզ պետք է հասկանալի դարձնեն նրանց դրդապատճառները՝ այս միջոցն իրենց կյանքի առօրյայում օգտագործելու հարցում:

14. Խնդիրներ, որոնք ուսանողներն ունենում են Աստվածաշունչն ուսումնասիրելիս (5 րոպե):

Քննարկի՛ր այն խնդիրները, որոնց նրանք հանդիպում են, երբ փորձում են ինքնուրույն Աստվածաշունչ ուսումնասիրել: Օգտագործի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 5-րդ գործողությունն իրենց պատասխանները տեսնելու համար:

Գործողություն 5. Ահա այն խնդիրները, որոնց ես հանդիպում եմ, երբ փորձում եմ ինքնուրույն Աստվածաշունչ ուսումնասիրել:



Քաջալերի՛ր նրանց, որ անկեղծ լինեն այս հարցում: Մենք ուզում ենք, որ այս դասընթացը գործնական օգնություն լինի նրանց՝ այս ասպարեզում ունեցած իրենց խնդիրները լուծելու համար: Մատնանշի՛ր, որ շատ քրիստոնյաներ՝ թե՛ հին, թե՛ նորադարձ, հաճախ են պայքարներ ունենում, երբ փորձում են Աստվածաշնչի իրենց ուսումնասիրությունը կիրառելի դարձնել կյանքում:

Եթե նրանք դժվարանան պատասխանել, դու կարող ես օգտագործել այն պատասխանները, որոնք նախկին ուսանողներն էին տվել, երբ անցյալում ուսուցանել էիր այս դասընթացը:

Ուսանողների պատասխաններն Աստվածաշնչի ուսումնասիրության հետ կապված խնդիրների վերաբերյալ:

ա.

բ.

գ.

դ.

ե.

զ.

է.

ը.

թ.

ժ.

15. Անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի 1-ին գլխի հիմնական նյութը (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 4-13-րդ էջեր:

Ինչքան ժամանակը թույլ կտա՝ համառոտ անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի 1-ին գլխի հիմնական նյութը: Մա լավ հատված է՝ քո կյանքից օրինակներ բերելու համար՝ այն մարտահրավերների վերաբերյալ, որոնց դու հանդիպում ես Աստվածաշնչի ամենօրյա ուսումնասիրության ժամանակ:

Եթե արդեն անցկացրել ես, թե ինչու է կարևոր Աստվածաշնչի ուսումնասիրությունը, ուրեմն առա՛ջ գնա՝ անցնելով 9-րդ էջի Բ. կետում («Նախապատրաստվել Աստվածաշնչի ուսումնասիրության համար»)

1

գետեղված ենթակետ 1-ինը՝ «Ե՞րբ ես պետք է ուսումնասիրեմ Աստվածաշունչը»:

3-րդ կետում՝ «Ի՞նչ է ինձ պետք Աստվածաշունչ ուսումնասիրելու համար» (Ուսանողի ձեռնարկ, էջ 12-րդ), կա երկու ինտերնետային կայքերի հղում, որոնք անվճար աղբյուրներ են առաջարկում Աստվածաշնչի՝ հատկապես տարբեր թարգմանությունների ուսումնասիրության համար: Դու կարող ես մուտք գործել այդ կայքը՝ տեսնելու համար, թե արդյո՞ք դրանք շարունակում են նույն ինտերնետային հասցեի տակ գործել:

Ընդգծի՛ր ք. ենթակետի կարևորությունը՝ «Պահի՛ր նոթատետր քո նշումների համար»: Մեծ արժեք կա նշելու այն ամենը, որն Աստված հայտնում է Աստվածաշնչի ուսումնասիրության ժամանակ: Նրանք նաև կարող են նշել ցանկացած հարց, որն առաջանում է Աստվածաշնչի ուսումնասիրության ընթացքում: Որոշ մարդիկ սա՛ Աստվածաշնչի իրենց ուսումնասիրության հետ կապված արժեքավոր բաները գրի առնելը, նմանեցնում են «օրագիր պահելուն»:

Հնարավոր է, որ այս դասին ժամանակ չունենաս, սակայն կարող ես հետո՝ հարմար մի պահի, ցույց տալ, թե ինչպես կարելի է համակարգչային ծրագիրն օգտագործել որպես միջոց՝ Աստվածաշնչի ուսումնասիրության համար:

16. Այլընտրանքային. Ներկայացրո՛ւ «Անձնական կիրառության լավ նպատակի նշանները» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 41-րդ:

Եթե ժամանակ ունես, կարող ես անցնել Անձնական կիրառության լավ նպատակի վեց նշաններով, որոնք թվարկված են Ուսանողի ձեռնարկի 41-րդ էջում: Այս ողջ դասընթացի ժամանակ մենք հաճախակի կհիշեցնենք անձնական կիրառության նպատակներ դնելու մասին՝ որպես Աստվածաշնչի ուսումնասիրության մի մաս: Լավ նպատակի այս վեց նշանները ներկայացնելուց հետո դու կարող ես շարունակել հղում անել դրանց՝ ողջ դասընթացի ընթացքում:

17. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Այսօրվա դասն ամփոփելիս կենտրոնացի՛ր այն գաղափարի վրա, ըստ որի՝ Աստվածաշունչը միջոց է, ինչպես նաև՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունն է միջոց: Դրանք երկուսն էլ պետք է պատշաճ ձևով օգտագործել, որպեսզի օգնեն մեզ՝ աճելու և ավելի մոտենալու երկրաժամկետ նպատակներին հասնելուն:

Այսօրվա անձնական կիրառության համար նրանք թող բացեն Ուսանողի ձեռնարկի 5-րդ էջը և գրեն երկու կամ երեք պատճառներ, թե ինչու են նրանք ուզում Աստվածաշունչ ուսումնասիրել: Նրանք կարող են անդրադառնալ նաև Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 6-րդ հարցին և գրել երկու կամ երեք ասպարեզներ իրենց կյանքում, որտեղ իրենք ուզում են աճել:

Բացատրի՛ր, թե ինչպես կարող են այդ ասպարեզների մասին, որտեղ նրանք հետաքրքրված են աճելու առումով, գրել դատարկ թղթի վրա և դնել այն իրենց Աստվածաշնչի մեջ: Նրանք կարող են այս ցուցակին ավելացնել երկու կամ երեք խնդիրներ, որոնց հանդիպում են իրենց կյանքում: Քաջալերի՛ր նրանց՝ այդ թուղթը պահել իրենց Աստվածաշնչում՝ որպես անձնական պաշտամունքի համար հերթական ընթերցանությունը գրքում նշելու էջանիշ:

Քաջալերի՛ր նրանց, որպեսզի Աստվածաշնչի իրենց ամենօրյա ընթերցանության ժամանակ նաև կարդան այդ թուղթը, որում նշված են այն ասպարեզները, որտեղ ուզում են աճել, և տեսնեն, թե իրենց կարդացած համարներից որոնք են խոսում այդ կարիքների մասին: Քաջալերի՛ր նրանց՝ գրի առնել այն ամենը, ինչը կօգնի աճելուն: Մենք սրա մասին մանրամասնորեն կանցնենք հաջորդ դասին:

Ընդգծի՛ր, որ Աստվածաշունչ կարդալու գլխավոր պատճառն այն է, որ սովորենք գտնել մեր ունեցած հարցերի պատասխանները, ինչպես նաև իմաստություն ստանալ, թե ինչպես սկսենք կյանքի իրավիճակներին Աստծո ուզած ձևով արձագանքել:

18. Հանձնարարություններ:

- Ա. Բացատրի՛ր ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ը. *«Իմ սթրեսային իրավիճակները»*:
- Բ. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի համար:
- Դ. Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը, եթե դեռ չես բաժանել:

1

Ե. Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար: Բացատրի՛ր, որ հնարավոր է՝ դու չկարողանաս այդ ամբողջ նյութն անցնել հաջորդ դասաժամին:

19. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.

Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնել իմ կյանքում

2

1. Աստվածաշնչյան քանալի ճշմարտություն:

Աստվածաշնչի ուսումնասիրության ամենակարևոր բանն այսօր իմ կյանքում գործի դնելն (անելն) է այն, ինչ սովորեցնում է տվյալ համարը:

2. Բանալի համար. Մարկոս 4:24.

«Ձգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում. ինչ չափով որ *չափեք*, դրանով էլ ձեզ պիտի չափվի. և ձեզ, որ լսում եք՝ *ավելին* պիտի տրվի»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 2-ը՝ «Իմ սթրեսային իրավիճակները», նույնպես կօգտագործվի այս դասին:

4. Դասի ջերմացման գործողություն (3-5 րոպե):

Ա. «Կրկին անդրադառնանք սթեյքի օրինակին» (1 րոպե):

Համառոտ հիշատակի՛ր առաջին դասաժամին օգտագործված օրինակը՝ այս դասընթացը համեմատելով սթեյք պատրաստել սովորելու հետ:

Մեկ այլ տարբերակ է՝ նույն բանն այլ սննդի օրինակով ներկայացնելը. Մի ափսե հում բրինձ կամ նույնիսկ ալյուր, որից կարելի է շոկոլադե թխվածքներ պատրաստել: Մի ուսուցիչ բերել էր թխվածք պատրաստելու բոլոր բաղադրիչները և պատրաստել ու թխել էր՝ որպես դասաժամի մի մաս: Չնայած դա հրաշալի բնական օրինակ է, սակայն ես վստահ չեմ, թե հետո նա ինչքան ժամանակ ունեցավ դասի ծրագրի մնացած թեմաներն անցնելու համար:

Բ. Օգտակար համարներ (2-4 րոպե):

Խնդրի՛ր, որ մեկ կամ երկու ուսանող կիսվեն վերջերս տեղի ունեցած իրենց անձնական օրինակով, երբ աստվածաշնչյան ինչ-որ համար օգնել է նրանց: Դու կարող ես նաև կիսվել աստվածաշնչյան մի հատվածով, որը

վերջերս ես ուսումնասիրել քո անձնական պաշտամունքի ժամանակ, և բացատրել, թե ինչպես է այն օգնել քո կյանքում:

Ուսուցիչներից մեկն այս առիթն օգտագործել էր՝ բացատրելով, թե ինչպես է նա կիրառում նոթատետրը, որտեղ գրի է առել այն ամենը, ինչ Աստված նրան ցույց է տալիս անձնական պաշտամունքի ժամանակ:

2

Գ. Սթրեսային իրավիճակներ (2-4 րոպե):

Քո ուսանողներին բացատրի՛ր, որ այսօրվա դասին մենք ավելի շատ կխոսենք սթրեսային իրավիճակների մասին: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 2-ում կատարած նրանց աշխատանքը նույնպես վերաբերում է սթրեսային իրավիճակներին: Վերցրո՛ւ ռետինե մի օղակ և, ձեռքերիդ վրա անցկացնելով և ձեռքերդ իրարից հեռացնելով, ձգի՛ր այն երկու ձեռքերիդ միջև: Բացատրի՛ր, թե ինչպես կարող է սթրեսն ազդել քեզ վրա: Այն, իրոք, կարող է քո լարվածությունն առավելագույնի հասցնել: Մասնանշի՛ր, որ Աստծո Խոսքը կարող է թուլացնել այս լարվածությունը (բացատրելու ընթացքում ձեռքերդ աստիճանաբար մոտեցրո՛ւ իրար և թո՛ւյլ տուր, որ ռետինե օղակը թուլանա):

5. Ներկայացրո՛ւ Ա. կետը. «Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերը» (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 14-19-րդ էջեր:

Դասի ամենասկզբից արտահայտի՛ր քո ցանկությունը, որ պատրաստ ես օգնել նրանց, որպեսզի տեսնեն, թե ինչպես կարող են Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնել իրենց կյանքում այսօր, ոչ թե հինգ տարի հետո: Եթե ուզում ենք, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի լինի մեր կյանքում, ապա մեր նպատակակետը պետք է լինի անձնական կիրառությունը:

Մենք Աստվածաշնչի ուսումնասիրություն չենք կատարում՝ ընդամենը մեր գլխում լավ տեղեկություններ կուտակելու համար: Աստվածաշնչի ուսումնասիրությունը մեզ պետք է հանդերձավորի գործելու համար: Մենք կարիք ունենք Աստծո Խոսքն ընդունելու մեր սրտի մեջ և ասելու. «Ես ուզում եմ հնազանդվել Աստծուն: Ես ուզում եմ Աստծո ճշմարտություններն իմ կյանքում կիրառելի դարձնել այսօր»:

Եթե ուզում ենք, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը պիտանի լինի մեզ համար, մենք պետք է հասկանանք երեք քայլերի շատ պարզ մի գործընթաց:

Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերն աստվածաշնչյան հիմք կամ պատկեր են ստեղծում, որը կարտացոլվի Աստվածաշնչի ուսումնասիրության այն բոլոր մեթոդներում, որոնք ներկայացված են այս դասընթացում:

Քանի որ Աստվածաշնչի ուսումնասիրության՝ ստորև բերված երեք հիմնական քայլերը շատ կարևոր են ողջ դասընթացի համար, դու կարող ես այդ երեք քայլերը վրան գրված պլակատ պատրաստել և փակցնել դասասենյակի պատին, որպեսզի ողջ դասընթացի ժամանակ կարողանաս արագ հղում անել դրան:

Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 14-19-րդ էջերն ավելի շատ տեղեկություն ստանալու համար: Այս երեք քայլերը նաև ներկայացված են որպես մեր ուսուցման փիլիսոփայության հիմնական սկզբունքներ: Նաև՝ «Սովորեցնելու/Սովորելու գործընթացը» բաժինը գտնվում է՝ *«Ուսուցիչներին ներկայացնել Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար»* վերնագրով գրքի 12-21-րդ էջերում:

Սկզբում ներկայացրո՛ւ բոլոր երեք քայլերը, իսկ հետո վերադարձի՛ր և աստվածաշնչյան օրինակ բեր: Կարիք չկա, որ Աստվածաշնչի ուսումնասիրության յուրաքանչյուր հիմնական քայլից հետո մտնես բոլոր այն նախագծերի մանրամասն քննարկումների մեջ, որոնք նշված են Ուսանողի ձեռնարկում: Սակայն կարող ես համառոտ հիշատակել այդ նախագծերից մեկը կամ երկուսը՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող են դրանք օգնել նրանց՝ անելու այդ քայլը:

Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլեր:

1. **Իմացի՛ր փաստերը** (ի՞նչ է այն ասում): Քննի՛ր:
2. **Հասկացի՛ր իմաստը** (ի՞նչ է այն ասում): Մեկնաբանի՛ր:
3. **Կիրառի՛ր այն քո կյանքում** (Ինչպե՞ս կարող եմ սա կիրառել իմ առօրյա կյանքում): Անձնական կիրառություն:

Ուսանողի ձեռնարկ, էջ 15-րդ

2

6. Աստվածաշնչյան մի օրինակ է բեր Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերի համար (5-10 րոպե):

Ահա մի օրինակ, որ կարող ես օգտագործել որպես մոդել այս երեք քայլերի համար: Ազատ զգա աստվածաշնչյան տարբեր համարներ օգտագործելիս, որոնք ավելի տեղին կլինեն տվյալ պահին քո դասարանի համար:

Հակոբոս 1:2. «Եղբայրներ՝ ռս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք»:

Հակոբոս 1:2. «Եղբայրներ՝ ր, բոլորովին ուրախության արժանի բան սեպեցե՛ք, երբ կերպ-կերպ փորձանքներու մեջ կ'իյնաք» (արևմտահայերեն թարգմանություն):

Քայլ 1. Իմացի՛ր փաստերը (ի՞նչ է այն ասում): Քննի՛ր:

Այս համարի մեջ եղած փաստերը շատ պարզ են: Դու այս փաստերը կարող ես իմանալ մեկ կամ երկու բոպեում: Աստված ուզում է, որ դու ուրախ լինես, երբ ամեն տեսակի փորձություններ ես ունենում:

Դու կարող ես ավելի խորանալ այս ճշմարտությունների մեջ, սակայն պարզ փաստերը միանգամայն հասկանալի են: Ի միջի այլոց, այս համարն ասում է, թե **ինչ** պետք է անես, այն է՝ ուրախ եղիր, երբ հանդիպում ես փորձությունների, սակայն չի ասում, թե **ինչպես** կարող ես դա անել: Դու ստիպված կլինես նայել Աստվածաշնչի այլ համարներ՝ ավելի լավ հասկանալու, թե **ինչպես** կարող ես ուրախ լինել, երբ հանդիպում ես փորձությունների ու խնդիրների:

Քայլ 2. Հասկացի՛ր իմաստը (ի՞նչ է այն ասում): Մեկնաբանի՛ր:

Մա ինչպե՞ս կարող է կապ ունենալ իմ կյանքի հետ: Այս քայլը շատ ավելի դժվար կարող է լինել, քան Քայլ 1-ինը: Որո՞նք են այն փորձությունները, որոնց դու հանդիպել ես այսօր կամ երեկ: Համարն ասում է՝ «այլևայլ փորձություններ»: Որո՞նք են այն տարբեր տեսակի փորձությունները, որոնց դու հանդիպել ես անցած մի քանի օրերի կամ շաբաթների ընթացքում: Հնարավոր է՝ քեզնից մեկ կամ երկու բոպեից ավելի շատ ժամանակ պահանջվի այդ փորձությունները վերհիշելու համար:

Համարը նաև խոսում է ուրախ լինելու մասին: Ինչպե՞ս ես դու արտահայտում քո ուրախությունը: Հե՞ջտ է արդյոք քեզ համար այս համարը. «երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք»:

Քայլ 3. Կիրառի՛ր այն քո կյանքում (Ինչպե՞ս կարող եմ սա կիրառել իմ առօրյա կյանքում): Անձնական կիրառություն:

Այս համարը քո կյանքի հետ կապելը առաջին անհրաժեշտ քայլն է, որպեսզի կարողանաս այն կիրառել քո կյանքի առօրյա գործունեության մեջ: Համարներ ուսումնասիրելու ողջ նպատակն աստվածաշնչյան այս ճշմարտությունները քո առօրյայում կիրառելն է: Եթե դու ուզում ես կիրառել այս համարը, ուրեմն հաջորդ անգամ, երբ փորձության հանդիպես, պետք է «ուրախ լինես»: Համարը չի ասում՝ «ուրա՛խ եղեք փորձություններից հետո»: Այն ասում է՝ ուրա՛խ եղեք, **երբ** փորձության մեջ եք: Հենց փորձության մեջ գտնված ժամանակ դու պետք է «ուրախ լինես»:

Հնարավոր է՝ շաբաթներ կամ ամիսներ տևեն, նախքան դու կկարողանաս մշտապես կիրառել այս համարի մեջ եղած ճշմարտությունը քո կյանքում և առօրյայում: Սա շատ է տարբերվում Քայլ 1-ինից, որտեղ ընդամենը մեկ կամ երկու րոպե էր պահանջվում, նախքան դու կկարողանայիր «իմանալ այդ համարի ճշմարտությունը»:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի գրեն իրենց փորձությունները, երբ փորձում են առօրյա կյանքում գործի դնել տվյալ համարը: Եթե անգամ նրանք ձախողումներ են ունենում, թող գրեն, թե ինչ է տեղի ունեցել: Ինչքան նրանք շատ հասկանան, այնքան ավելի հեշտ կլինի այն կիրառել մյուս անգամ:

Մակայն նրանց նաև տար այսօրվա դասաժամի Բանալի համարին.
Մարկոս 4:24. «Զգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում. ինչ չափով որ չափեք, դրանով էլ ձեզ պիտի չափվի. և ձեզ, որ լսում եք՝ ավելին պիտի տրվի»:

Նշի՛ր, որ Թոմաս Էդիսոնը 2000 տարբեր ձևեր ուսումնասիրեց, թե ինչ պատճառներով էլեկտրական լամպը **չի աշխատի**, նախքան կհայտնաբերեր, թե ինչպես այն հաջողությամբ **կաշխատի**: Մենք հույս ունենք, որ քեզնից այդքան երկար ժամանակ ու ջանքեր չի պահանջվի սովորելու համար, թե ինչպես Աստծո ճշմարտությունները գործնական ձևով կիրառես քո կյանքում:

7. Լրացուցիչ մեկնաբանություններ «Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերի» վերաբերյալ:

Ա. Այս քայլերը ներկայացնելիս մատնանշի՛ր, որ Աստվածաշնչի ընթերցանությունը հիմնականում իրականացնում է միայն առաջին քայլը՝ տեղեկություն ստանալ:

2

Բ. Մատնանշի՛ր, որ կան Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ, որոնք կարող են նրանց օգնել՝ լրացնելու համար բոլոր երեք քայլերը:

Գ. Ընդգծի՛ր առաջին քայլից այն կողմ անցնելու կարևորությունը:
Մարկոս 4:24. «Ձգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում. ինչ չափով որ չափեք, դրանով էլ ձեզ պիտի չափվի. և ձեզ, որ լսում եք՝ ավելին պիտի տրվի»:

Նշի՛ր, որ Աստվածաշնչյան այս ճշմարտությունների վերաբերյալ ավելի խորը հասկացողություն ձեռք բերելու բանալին այստեղ է. «...**ինչ չափով որ չափեք... ավելին պիտի տրվի**»:

Շարունակի՛ր այս դասընթացի յուրաքանչյուր դասաժամին հղում կատարել այս երեք քայլերին:

8. Քննարկի՛ր Բ. կետը. «Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր» (15-25 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 19-20-րդ էջեր:

Ուսանողներին հիշեցրո՛ւ այսօրվա Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը: Նշի՛ր, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնելու մեկ այլ ձև է այն, որ սկսենք նայել մեր կյանքին՝ նախքան Աստվածաշնչի ուսումնասիրությունը սկսելը: Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը, որ գտնվում է Ուսանողի ձեռնարկի 20-րդ էջում, մի պարզ օրինակ է, թե ինչպես նրանք կարող են դա անել:

Սկսելով առաջին քայլից՝ մենք պետք է նայենք մեր կյանքի այն ասպարեզներին, որտեղ հանդիպում ենք դժվարությունների ու մարտահրավերների: Որից հետո պետք է սկսենք Աստվածաշնչի ուսումնասիրությունը՝ օգնություն փնտրելով Աստծո Խոսքի մեջ: Այնուհետև մենք կվերցնենք այն, ինչ սովորել ենք Աստվածաշնչի մեր ուսումնասիրության ժամանակ, և գործնականում կկիրառենք մեր առօրյա կյանքում. անձնական կիրառություն:

Ա. Սկզբում արագ անցի՛ր ողջ աղյուսակով, որը գտնվում է այս Ուսուցչի ձեռնարկի 35-րդ էջում և Ուսանողի ձեռնարկի 20-րդ էջում:

Բ. Այնուհետև օրինա՛կ բեր քո կյանքից: Հերթականությամբ բացատրի՛ր, թե ինչպես ես դու յուրաքանչյուր քայլը կատարել:

- Գ. **Քայլ 1. «Գրի՛ր սթրեսային իրավիճակները»:** Թող ուսանողները գրեն մի քանի սթրեսային իրավիճակներ, որ վերջերս են ունեցել: Նրանք կարող են օգտագործել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի իրենց օրինակները:

Դասի այս հատվածի համար մեկ այլ տարբերակ է՝ հանձնարարել երկու հոգու՝ կոնֆլիկտային մի իրավիճակ ներկայացնել: Դրա համար պետք է նախապես պատրաստվես այն ուսանողների հետ, ում դու ուզում ես, որ մասնակցեն այս փոքրիկ ներկայացման մեջ:

Երբ ուսանողներն ավարտեն իրենց դերակատարումը, դու կարող ես նրանց հետ քննարկել, թե ինչքանով է այս օրինակը կապված Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերի հետ:

- Դ. Աղյուսակի **Քայլ 2-րդը** հարց է, որը մենք օգտագործում ենք մեր մտորումներն ուղղորդելու համար: Մենք Քայլ 2-ին պատասխանում ենք 3-6-րդ քայլերում:

- Ե. **Քայլ 3-րդը** խնդրում է նրանց՝ թվարկել իրենց կյանքի այն ասպարեզները, որտեղ ուզում են աճել: Սրա համար կարիք կա հետ հղում անել առաջին և երկրորդ քայլերին: Ա Կորնթացիներին 13:4-8-ն ընդամենը աստվածաշնչյան մի օրինակ է, որը մեզ օգնում է գտնել այն ասպարեզները, որտեղ մենք կարիք ունենք աճելու: Կան բազմաթիվ այլ նպատակահարմար համարներ:

Այն ասպարեզում, որտեղ նրանք աճելու կարիք ունեն, հնարավոր է, որ չլինի Քայլ առաջինում նշված խնդիրը: Օրինակ, եթե ուսանողն ասում է՝ «Ես բարկանալու խնդիր ունեմ», ուրեմն որտե՞ղ նա կարիք ունի աճելու: Քայլ 3-րդը կարող է ավելին լինել, քան ընդամենը՝ «Ես պետք է դադարեմ բարկանալ»: Կարող են տասը տարբեր ասպարեզներ լինել, որտեղ նա կարիք կունենա աճելու, որպեսզի բարկությունն այլևս այդքան մեծ խնդիր չլինի նրա կյանքում:

- Զ. **Քայլ 4-րդը՝ «Կապի՛ր դա քո Աստվածաշնչի ուսումնասիրության հետ»**, կարող է արվել ավելի քան մեկ ձևով: Կողմնորոշվելով, թե որ ասպարեզներում են նրանք ուզում աճել, ուսանողը կարող է Աստվածաշնչում հատուկ համարներ որոնել, որոնք վերաբերում են այդ կոնկրետ ասպարեզին, օրինակ՝ սիրելի քեզ ցավացնողներին, բարություն ցույց տալ, ներել մարդկանց:

Դու կարող ես քո ուսանողներին հորդորել, որ գնեն J.C. Countryman-ի՝ *“God’s Promises for Men”* կամ *“God’s Promises for Women”* գիրքը

2

(Nelson Publ.), որը նրանց կօգնի գտնել կոնկրետ համարներ, որոնք վերաբերում են իրենց կյանքում տեղի ունեցող կոնկրետ դեպքերին:

Աստվածաշնչի ուսումնասիրության մեկ այլ մոտեցում է՝ պարզապես փնտրել համարներ, որոնք վերաբերում են տվյալ թեմային, երբ նրանք անում են իրենց սովորական՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը՝ որտեղ էլ որ Աստվածաշնչի ընթերցանության մեջ հասած լինեն: Եթե նրանք կարդում են Ղուկասի Ավետարանից և այսօր արդեն ընթերցում են 6-րդ գլուխը, հնարավոր է՝ այս գլխի մեջ ինչ-որ համար կապ ունենա այն ասպարեզի հետ, որտեղ նրանք աշխատում են աճել:

Նրանք կարող են նոր իմաստություններ փնտրել նաև, երբ եկեղեցի են հաճախում և քարոզ լսում:

- Է. **Քայլ 5-րդը** կապ ունի նպատակներ դնելու հետ (անձնական կիրառության նպատակներ): Այդ նպատակները պետք է օգնեն նրանց, որ սկսեն գործադրել այն, ինչ սովորել են Աստվածաշնչի իրենց ուսումնասիրությունից: Նպատակներ դնելը հեշտ գործ չէ, հատկապես, եթե քո ուսանողները հաճախ չեն արել դա:

Ուսանողի ձեռնարկի կազմի ներսի կողմում կա վեց կետից բաղկացած մի ուղեցույց՝ անձնական կիրառության լավ նպատակներ դնելու վերաբերյալ: Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ օգտագործեն այդ ուղեցույցն իրենց նպատակները գրելիս և Քայլ վեցերորդում իրենց առաջընթացը գնահատելիս:

- Ը. **Քայլ 6.** Քո նպատակները գնահատելիս հե՛տ գնա և նորի՛ց տուր Քայլ 2-րդի հարցն ու օգտագործիր գնահատելու արդյունքները: Առաջինը, քո ուսանողները պետք է գնահատեն, թե արդյոք կարողացե՞լ են հասնել այն նպատակին, որը դրել էին իրենց առաջ: Նրանք նաև պետք է հաշվի առնեն, թե ինչքանով է դա օգնել նրանց՝ աճելու այն ասպարեզում, որն ընտրել էին այդ նախագծի համար: Ի՞նչ դժվարությունների էին հանդիպել: Ո՞րն է լինելու նրանց հաջորդ քայլը:

Մի ուսուցչի վկայությունից. Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը մեծ ազդեցություն թողեց մեր դասարանում: Մենք օգտագործեցինք «ոչ-շինաբեր խոսակցություն և լեզուն նվաճել»՝ որպես մեր սթրեսային իրավիճակ: Ես օգտագործեցի Եփեսացիներին 4:29, Հակոբոս 3:9, Առակաց 26:18-19 և Ղուկաս 6:45 համարները՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը կատարելու համար:

Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր

1. Գրի՛ր սթրեսային իրավիճակներ.
 - Իրավիճակներ, որտեղ ես հեշտությամբ եմ լարվում, հիասթափվում, բարկանում, նյարդայնանում կամ ճնշվում:
2. Աստճո՛ւն տուր այս հարցը.
 - «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես Դու փորձում ինձ սովորեցնել, որ ես **անեմ այսօր**»:
3. Գտի՛ր քո կյանքում մի ասպարեզ, որտեղ դու **ուզում ես աճել**.
 - Օգտագործի՛ր Ա Կորնթացիներին 13:4-8-ը՝ գտնելու համար այն հնարավոր ասպարեզները, որտեղ դու աճելու կարիք ունես:
4. Կապի՛ր դա քո **Աստվածաշնչի ուսումնասիրության** հետ.
 - Ի՞նչ ունի Աստվածաշունչն ասելու այն ասպարեզի վերաբերյալ, որտեղ դու ուզում ես աճել:
5. Գրի՛ր բաներ, որոնք դու կարող ես ավարտել այսօր.
 - Մի խոսքով՝ նպատակնե՛ր դիր:
 - Ընտրի՛ր նպատակներից մեկը և այն կատարի՛ր այսօր:
6. Գնահատի՛ր արդյունքները.
 - Ավելի ուշ՝ այդ օրը կամ հաջորդ օրը, վերանայի՛ր, թե ինչ տեղի ունեցավ, երբ դու փորձեցիր հասնել քո դրած նպատակին:

Ուսանողի ձեռնարկ, էջ 20-րդ

Նույն աղյուսակը կամ դրա ձևափոխված տարբերակները օգտագործված են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի հետևյալ դասընթացներում.

Թոուցիկ հայացք Աստվածաշնչին, դաս 3-րդ:

Քրիստոնեական պրակտիկա, դաս 2-րդ:

Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ, դաս 8-րդ և 9-րդ (կասկածներ):

Հաջողակ քրիստոնեական կենսակերպ, դաս 2-րդ:

2

9. Քննարկի՛ր նախագիծ 2-րդը. «Իմ սթրեսային իրավիճակները» (10-20 րոպե):

Թող քո ուսանողները կիսվեն իրենց անձնական օրինակներով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդից. «Իմ սթրեսային իրավիճակները»: Վերցրո՛ւ նրանց օրինակներից մեկը կամ երկուսը և հետևի՛ր Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերում նշված՝ Աստվածաշնչի ուսումնասիրության քայլերին:

Դու կարող ես կիսվել նաև քո կյանքի օրինակով՝ ցույց տալու համար, թե ինչպես ես օգտագործում Աստվածաշնչի ուսումնասիրությունը, որպեսզի օգնես քեզ այսօր:

Ընդգծի՛ր պարզ նպատակներ դնելու կարևորությունը:

10. Անձնական կիրառություն:

Բացատրի՛ր, որ այսօրվա անձնական կիրառությունը Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերն օգտագործելն է: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդը դրա համար միջոցներ կտրամադրի:

11. Հանձնարարություններ:

Ա. Բացատրի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդը **«Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր»:**

Բ. Համառոտ բացատրի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը՝ **«Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերը»:**

Գ. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի համար գնահատական՝ դիր դասի վերջում, եթե իհա՛րկե նրանք չեն ուզում այն օգտագործել Նախագիծ 4-րդը կատարելիս:

Դ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Մարկոս 4:24-ի վերաբերյալ:

12. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարահասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.

Համարներ անգիր անել

1. Աստվածաշնչյան քանայի ճշմարտություն:

Աստվածաշնչյան համարներ անգիր անելը հեշտացնում է դրանց ուսուցումն ու կիրառումն իմ կյանքի այսօրվա իրավիճակներում:

2. Քանայի համար. Հակոբոս 1:25.

«Իսկ ով ազատության կատարյալ օրենքին է նայում ու հետևում՝ լինելով լսող և չմոռացող, այլ կատարող, նա այդ անելով՝ երանելի կլինի»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլխում և 4-րդ գլխի 29-35 էջերում զետեղված նյութերը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ը՝ «Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը», նույնպես կօգտագործվի այս դասին:

4. Դասի ջերմացման գործողություն:

Ա. Կիսվի՛ր քո սիրելի համարով (5 րոպե):

Քանի որ մենք այսօր պատրաստվում ենք խոսել աստվածաշնչյան համարներ անգիր անելու մասին, դու կարող ես մի քանի ուսանողների խնդրել, որ դասարանի հետ կիսվեն իրենց սիրելի համարներով: Դու նրանց ժամանակ տուր համառոտ բացատրելու համար, թե ինչու է այդ համարը նրանց համար այդքան նշանակալի:

Բ. Քննարկի՛ր նրանց կատարած աշխատանքը Նախագիծ 4-րդում (5-10 րոպե):

Դասի սկզբում դու կարող ես 5-10 րոպե ժամանակ հատկացնել՝ քննարկելու համար նրանց կատարած աշխատանքն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդում. «Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը»: Սա կօգնի վերանայել անցած դասաժամին քննարկված թեմաները: Այն նաև լավ հնարավորություն է՝ ցույց տալու համար անգիր արած համարների կիրառելիությունը, որն այս դասի ծրագրի կարևոր մասն է կազմում:

**5. Ներկայացրո՛ւ Ա. կետը. «Անձնական պաշտամունք»
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 21-23-րդ էջեր:**

Դասի այս մասը սկսի՛ր՝ քննարկելով անձնական պաշտամունքը. ի՞նչ է դա, և ինչպե՞ս կարող են քո ուսանողներն այն դարձնել իրենց քրիստոնեական կյանքի կարևոր մի մասը:

Օգտագործի՛ր հետևյալ հարցերը՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես են քո ուսանողները մինչև հիմա հասկացել անձնական պաշտամունքը (կարիք չկա նշված բոլոր հարցերն օգտագործել):

3

- Ա. Ի՞նչ է անձնական պաշտամունքը:
- Բ. Ինչքա՞ն հաճախ ես դու անձնական պաշտամունք ունենում:
- Գ. Միջին հաշվով ինչքա՞ն ժամանակ ես դու անցկացնում ընթերցանության և աղոթքի մեջ քո անձնական պաշտամունքի համար:
- Դ. Քրիստոնյա դառնալուց ինչքա՞ն ժամանակ հետո սկսեցիր անձնական պաշտամունքի համար ժամանակ հատկացնել:
- Ե. Ի՞նչ խնդիրներ ես դու ունենում մշտական անձնական պաշտամունքի ժամ զարգացնելու հարցում:
- Զ. Ինչպե՞ս է անձնական պաշտամունքն օգնում քեզ:

Վերը նշված հարցերին տրված՝ քո ուսանողների պատասխանների հիման վրա կողմնորոշվի՛ր, թե որքան ժամանակ կարիք կա հատկացնել Ուսանողի ձեռնարկի երրորդ գլխի նյութը վերանայելու համար: Անպայման ընդգծի՛ր, որ անձնական պաշտամունքն ավելի շատ օգուտ կտա, եթե քո ուսանողները կենտրոնանան իրենց ուսումնասիրած համարներն իրենց կյանքում կիրառելու վրա:

Նաև շեշտի՛ր իրենց անձնական պաշտամունքի ժամանակ նշումներ անելու կարևորությունը (դրա մասին կարող ես գտնել Ուսանողի ձեռնարկի 21-22-րդ էջում. կետ Ա-2-բ. «Կարդա՛ Աստվածաշունչը և նշումնե՛ր արա»):

6. Ներկայացրո՛ւ Բ. կետը. «Աստվածաշնչի խմբային ուսումնասիրություն և ընտանեկան պաշտամունք» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 23-25-րդ էջեր:

Նշի՛ր Աստվածաշնչի խմբային ուսումնասիրության մեջ ներգրավված լինելու կարևորությունը՝ լինի դա տեղական եկեղեցու միջոցով, թե

մտերիմների խմբի: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի ծրագրեն ընտանեկան պաշտամունքը դարձնել իրենց օրակարգի մի մասը:

Դասի հաջորդ մասին անցնելու համար քաջալերի՛ր նրանց, որպեսզի համարներ անգիր անելը դարձնեն իրենց անձնական պաշտամունքի մշտական մասը: Այս դասի հաջորդ մեծ բաժինը վերաբերում է համարներ անգիր անելուն:

7. 4-րդ գլխից քննարկիր Բ-2. կետը. «Ինչո՞ւ ես պետք է համարներ անգիր անեմ» (5 բույս), Ուսանողի ձեռնարկ, էջ 30-րդ:

Քննարկման այս հատվածը սկսի՛ր քո ուսանողներին առիթ տալով պատասխանել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ ես պետք է համարներ անգիր անեմ»: Թող սկզբում նրանք կիսվեն իրենց պատասխաններով՝ նախքան դու կարտահայտես քո մտքերը:

Նշի՛ր, թե համարներ անգիր անելը ինչպես նրանց կօգնի՝ փոխել իրենց վերաբերմունքներն ու մտքերը: Քաջալերի՛ր նրանց՝ համարներ անգիր անել անմիջապես քննելուց առաջ և առավոտյան արթնանալուց հետո:

Շատ նորադարձ քրիստոնյաներ, ովքեր նախկինում թմրանյութից կախվածություն են ունեցել, խառնաշփոթի են վերածել իրենց մտքերը: Այս մարդկանցից շատերը հայտնաբերել են, որ համարներ անգիր անելն օգնել է նրանց՝ իրենց մտքերի բժշկության և վերականգնման հարցում:

8. Քննարկի՛ր Բ. կետը՝ համարներ անգիր անելու մեթոդների վերաբերյալ (10-15 բույս), Ուսանողի ձեռնարկ, 29-35-րդ էջեր:

Արագ մատնանշի՛ր Ուսանողի ձեռնարկի 29-35-րդ էջերում գտնվող՝ համարներ անգիր անելու տարբեր մեթոդները:

Ժամանակի մեծ մասն անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի 31-րդ էջում բերված մեթոդի վրա. «գ. Անգի՛ր արա համարը՝ ամեն անգամ սովորելով երեք կամ չորս բառ»:

Օգտագործե՛ք Բ Կոնթացիներին 8:11-ը և, օգտագործելով այս մեթոդը, անգի՛ր արեք այդ համարը դասարանում: Այդ համարը Ուսանողի ձեռնարկի 31-րդ էջում է:

Դատարկ թղթե՛ր բաժանիր ուսանողներին, որպեսզի դրանք օգտագործեն համարը դասարանում անգիր անելիս:

Թող նրանք միասին կարդան այս համարի առաջին հատվածը: Այնուհետև գրեն այն: Հետո ավելացնեն հաջորդ հատվածը՝ բանավոր կրկնելով նախորդը: Դրանից հետո ամփոփի՛ր, թե ինչ են նրանք գրել առաջին անգամ, այնուհետև գրի՛ր ամբողջը, ինչը նրանք անգիր են արել:

1) Համոզվի՛ր, որ **բոլոր** ուսանողներն են մասնակցում:

2) Եթե չեն մասնակցում, կրկնե՛ք, որպեսզի նրանք էլ միանան:

Փորձե՛ք արագ անգիր անել համարը, որպեսզի նրանք տեսնեն, որ համարներ անգիր անելը երկար ժամանակ չի պահանջում:

3

9. Ամփոփե՛ք ձեր անգիր արածը:

Ընդգծի՛ր, որ կարևոր է՝ նույն համարը օրվա մեջ մի քանի անգամ կրկնել՝ մի քանի օր շարունակ: Քաջալերի՛ր նրանց՝ հետևել այս պատկերին այն համարների համար, որոնք նրանք յուրաքանչյուր դասընթացին անգիր են սովորում: Քաջալերի՛ր նրանց, որ սկսեն համարներն անգիր անել հանձնարարությունները ստանալուն պես:

10. Մանրամասն քննարկի՛ր այսօրվա Բանալի համարը (5-10 րոպե):

Հակոբոս 1:25.

«Իսկ ով ազատության կատարյալ օրինքին է նայում ու հետևում՝ լինելով լսող և չմոռացող, այլ կատարող, նա այդ անելով՝ երանելի կլինի»:

Ա. Այս համարի խոստումը հիմնված է հետևյալ պայմանի վրա՝ «լսող և չմոռացող»: Չմոռանալու լավագույն ձևն անգիր անելն է:

Բ. Խոստումը հիմնված է նաև այն նախապայմանի վրա, որ մարդն «ազատության կատարյալ օրենքին է նայում ու հետևում»: Համար անգիր անելու լավագույն ձևը դրան նորից ու նորից «նայելն ու հետևելն» է: Շարունակ վերանայի՛ր այն: Նաև շարունակ փնտրի՛ր ձևեր՝ համարը քո կյանքի հետ կապելու համար:

Գ. Համարի խոստման մի մասն ասում է՝ «այդ անելով»: Անգիր սովորած համարն իմաստալից դարձնելու լավագույն ձևն ամենօրյա կյանքում այն կիրառելն է:

Դ. Համարի մեկ այլ խոստում է այն, որ տվյալ մարդը «այդ անելով՝ երանելի կլինի»: Որպեսզի անգիր սովորած համարը ոգևորիչ դառնա քեզ համար, պետք է անես այն, ինչ համարն ասում է:

- Ե. Համարը նշում է Աստծո Խոսքի գործության մասին՝ այն կոչելով «ազատության կատարյալ օրենք»: Սա հուշում է այն մասին, թե ինչպիսի համարներ են պետք է անգիր անեն: Ես պետք է ընտրեմ այնպիսի համարներ, որոնք վերաբերում են իմ կյանքի այն ասպարեզներին, որտեղ ես ազատ չեմ: Ընտրի՛ր համարներ, որոնք վերաբերում են այն խնդիրներին կամ ասպարեզներին, որտեղ դու ուզում ես աճել:
- Զ. «Աստծո Խոսքը մարդուն ազատ է դարձնում»: Ազատ՝ ի՞նչ անելու: Ի՞նչ է ազատությունը: Ազատությունն իշխանություն չէ՝ անելու այն, ինչ ուզում եմ: Ազատությունն իշխանություն է՝ անելու այն, ինչ ես գիտեմ, որ ճիշտ է (աղբյուր. նշումներ Institute in Basic Life Principles-ի սեմինարից):

11. Անցկացրո՛ւ 4-րդ կետը. «Ինչպե՞ս կարող եմ համարներ անգիր անելը դարձնել առավել օգտակար իմ կյանքում» (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 33-35-րդ էջեր:

Անցկացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի այս հատվածում նշված վեց կետերը (33-35-րդ էջեր)՝ կախված քո ուսանողների հետաքրքրություններից ու կարիքներից:

Է. «Համարներ անգիր անելն օգնում է մեզ՝ նորոգել մեր միտքը» բաժինը կարող էր ինքնին մի ամբողջ դասընթաց լինել: Քո ուսանողներին խնդրի՛ր կիսվել, թե ինչպես են Աստվածաշնչի համարները նրանց օգնել իրենց մտածելակերպը փոխելու հարցում:

12. Անձնական կիրառություն (3-5 րոպե):

Անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ երկու հանգամանքների վրա:

Ա. Ժամանակ հատկացնել անձնական պաշտամունքի համար:

Քաջալերի՛ր, որպեսզի քո դասարանի յուրաքանչյուր ուսանող նպատակ դնի՝ ամեն օր անձնական պաշտամունք ունենալու: Եթե ուսանողներից ոմանք դեռևս անձնական պաշտամունքի ժամ չունեն, հորդորի՛ր նրանց, որպեսզի նպատակ դնեն հետագա յոթ օրերին դա անելու համար: Խնդրի՛ր նրանց, որ իրենց առաջընթացի վերաբերյալ տեղյակ պահեն քեզ կամ որևէ մեկին՝ ում կընտրեն: Նրանք կարող են իրենց ընտրած մարդուն թույլ տալ՝ ստուգել իրենց առաջիկա յոթ օրերի ընթացքում, ոչ թե յոթ օր սպասել, որ հետո միայն տեղեկանան իրենց առաջընթացի մասին:

Քաջալերի՛ր նրանց, որ իրենց ամենօրյա անձնական պաշտամունքի առաջին շաբաթն ավարտելուց հետո շարունակեն դա անել մնացած ողջ կյանքի ընթացքում:

Եթե քո ուսանողներն արդեն ունեն անձնական պաշտամունքի ժամ, թող նրանք քեզ կամ որևէ մեկին տեղեկացնեն, թե ինչքանով են անձնական պաշտամունքի ժամերն իրենց օգնում ամենօրյա քրիստոնեական կյանքում: Եթե նրանք դժվարանում են անձնական պաշտամունքի ժամանակը պիտանի դարձնել իրենց կյանքի համար, ուրեմն քաջալերի՛ր նրանց, որ այս հարցը քննարկեն ինչ-որ մեկի հետ և ձևեր փնտրեն, թե ինչպես կարող են ավելի պիտանի դարձնել իրենց այդ անձնական պաշտամունքի ժամանակը:

3

Բ. Համարներ անգիր անելը:

Այսօրվա Անձնական կիրառման երկրորդ հատվածի համար, քաջալերի՛ր քո ուսանողներին՝ համարներ անգիր անել:

Դու կարող ես ժամանակ հատկացնել անձնական օրինակներ բերելու համար, թե ինչպես են քո անգիր արած համարներն օգնել քո կյանքում փորձություններ հաղթահարելիս, դժվարին իրավիճակներում: Կամ ինչպես են օգնել քեզ՝ կիրառել աստվածաշնչյան ուսուցումները ընկերոջ կամ ընտանիքի անդամներից մեկի հանդեպ քո վարվեցողության մեջ:

13. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույցի 3-րդ և 4-րդ նախագծերի համար: Գնահատակա՛ն դիր նաև Նախագիծ 2-րդի համար, եթե նրանք այն չեն հանձնել անցած դասաժամի վերջում:

Բ. Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդը.

1. Հանձնարարի՛ր ուսանողներին՝ կարդալ Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդի ցուցումներն Ուսանողի ձեռնարկի 27-րդ էջում և ԱՀԱԿ օրինակը՝ Ուսանողի ձեռնարկի 28-29-րդ էջերում: Ժամանակ մի հատկացրու՝ դասի այս հատվածում սույն մեթոդն անցնելու համար: Մենք այստեղ ընդամենն ուզում ենք Աստվածաշնչի ուսումնասիրության մի մեթոդի օգտագործման փորձառություն փոխանցել, որի մասին նրանք ինքնուրույն կարդացել են:
2. Աստվածաշնչյան մի հատվա՛ծ ընտրիր, որպեսզի բոլոր ուսանողներն օգտագործեն, նաև թող օգտագործեն այս ԱՀԱԿ

մեթոդը: Հնարավոր տարբերակների համար տե՛ս Ուսանողի ձեռնարկի 34-րդ էջը: Կարծում եմ՝ լավագույն տարբերակը կլինի՝ սահմանափակվել Աստվածաշնչի մի շատ կարճ գլխով կամ դրա կեսով:

3. Ասա՛ ուսանողներին, որ այս հանձնարարության վրա աշխատեն ոչ թե միասին, այլ ամեն մեկն առանձին:
 4. Թող նրանք երեք հատ թուղթ օգտագործեն. մեկական թուղթ Աստվածաշնչի ուսումնասիրության երեք բաժինների համար:
 5. Ասա՛ նրանց, որ թվարկեն յուրաքանչյուր միտք կամ հարց այնպես, ինչպես տրված է Ուսանողի ձեռնարկի 28-29-րդ էջերում: Թող նրանք նաև նշեն, թե որ համարին է յուրաքանչյուր մեկնաբանություն կամ հարց վերաբերում:
 6. Թող նրանք այս նախագծի վրա իրենց աշխատանքը բերեն հաջորդ դասաժամին, և մենք այն կօգտագործենք որպես մեր դասաժամի քննարկման մի մաս:
- Գ. Եթե դու ուսանողներից պահանջես, որ Ուսանողի ձեռնարկ, **Նախագիծ 5-րդը՝ «Համարի ուսումնասիրություն»**, կատարեն հաջորդ դասաժամի համար, ապա կարող ես մեկ բույե հատկացնել՝ պարզաբանելու ցուցումները: Մատնանշի՛ր, որ Աստվածաշնչի ոչ բոլոր համարները կհամապատասխանեն այն հարցերին, որոնք տրված են այս նախագծում: Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, թե ինչ է նշանակում Գործողություն 1-ինում նշված՝ «գործող բայերը»: Մենք խոսում ենք Հակոբոս 1:25-ում նկարագրված գործողությունների մասին: Այս համարը, որն օգտագործված է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդում, ներառում է հետևյալ գործողությունները.

** նայում է, հետևում է

** չի մոռանում

** կատարում է

** երջանիկ կլինի

- Դ. Ըստ ընտրության. Աստվածաշնչի ուսումնասիրությունն Հիսուսի աղոթքի կյանքի վերաբերյալ: Թող քո ուսանողները փնտրեն համարներ, որոնք նկարագրում են Հիսուսի աղոթքի դեպքերը. ոչ այնքան ընդհանուր, որքան անձնական աղոթքի: Ի՞նչ կարող ենք մենք սովորել Նրա աղոթքի

կյանքից, որը կօգնեք մեզ մեր աղոթքի կյանքի հարցում: Առաջարկվող հատվածներ. Մարկոս 6:30-31,45-50, Ղուկաս 9:10, Ղուկաս 22:39-46, Մատթեոս 6:5-13, Մատթեոս 14:22-27, Հովհաննես 17:

14. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարահասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4. Մտածել

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Աստծո Խոսքի վրա մտածելը լավագույն մեթոդներից մեկն է Աստծո Խոսքը մեր առօրյա կյանքի անբաժանելի մասը դարձնելու համար:

2. Բանալի համար. Հեաու 1:8.

«Օրենքի այս գիրքը թող քո բերանից չհեռանա՝, գիշեր ու ցերեկ մտածի՛ր դրա մասին, որպեսզի նրա մեջ ամբողջ գրվածը պահես ու կատարես. քանի որ միայն այդ դեպքում գործերդ կբարգավաճեն, և հաջողություն կգտնես»:

Հեաու 1:8 Արևմտահայերեն թարգմանություն:

«Այս օրինաց գիրքը քո բերնեղ չզատուի, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածես, որպեսզի բոլոր անոր մեջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յառաջ կտանիս, և այն ատեն յաջողություն կգտնես»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլխի նյութերը համընթաց են այս դասի հետ: Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդի հանձնարարությունը, Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը», Նախագիծ 5-րդի՝ «Համարի ուսումնասիրությունը» և Նախագիծ 6-րդի՝ «Փնտրել Աստծուն», նույնպես կօգտագործվեն այս դասին:

4. Դասի ջերմացման գործողություն. «Իմ սիրելի համարը» (5 րոպե):

Թող ուսանողները կիսվեն իրենց սիրելի համարներով, որոնք անգիր են արել: Նշի՛ր, որ այդ համարները հաճախ հատուկ իմաստ են ունենում մեզ համար: Այս դասին մենք ցույց կտանք, թե ինչպես է Խոսքի վրա մտածելն օգնում, որ ավելի խորացնա Աստծո Խոսքի մեր հասկացողությունը:

5. Ի՞նչ է նշանակում մտածել (5-10 րոպե):

Այսօրվա դասի քննարկումը սկսի՝ ր ուսանողներից պատասխաններ ակնկալելով.

- Ա. Թող ուսանողները տան իրենց սահմանումներն այս բառի համար՝ **մտածել**: Դու կարող ես գրել նրանց պատասխանները գրատախտակի վրա կամ ցույց տալ թափանցիկ սլայդի միջոցով:
- Բ. Թող ուսանողները քեզ տան անգիր անելու և մտածելու միջև եղած տարբերության վերաբերյալ իրենց բացատրությունները:
- Գ. Դու կարող ես բացատրել կովի որոճալու օրինակը, որպեսզի օգնես նրանց հասկանալու անգիր անելու և մտածելու միջև եղած տարբերությունը: Այս օրինակը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 35-36-րդ էջում:
- Դ. Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում Աստծո Խոսքի վրա **մտածել**: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 35-36-րդ էջում գտնվող 1-ին կետը:
- Ե. Դու կարող ես, ըստ քո ցանկության, հետևյալ բացասական օրինակների միջոցով ցույց տալ, թե ինչպես ենք մենք ամեն օր օգտագործում **մտածելը**.

Երբ մեկը քո հանդեպ մի բան է անում, որը քեզ դուր չի գալիս (հայիոյում է քեզ, ինչ-որ բան է գողանում քեզնից, քննադատում է մյուսների ներկայությամբ) դու, հնարավոր է, ավելի ուշ սկսես մտածել այդ դեպքի մասին: Դեպքը կարծես նորից անցնում է աչքերիդ առջևով՝ միայն մեկ տարբերությամբ. հիմա արդեն դու մտածում ես, թե ինչ կարող էիր ասել կամ անել, որպեսզի վրեժ լուծեիր նրանից: Տվյալ իրավիճակի շուրջ քո մտորելը կամ խորհելը հենց մտածելն է:

Իհա՛րկե, Աստծո ուզածն այս տեսակ բացասական մտածելը չէ: Դրա փոխարեն Աստված ուզում է, որ մենք դրական ձևով մտածենք, այն է՝ ինչպես Աստծո Խոսքն օգտագործել, որպեսզի օգնենք մեզ՝ քրիստոսակերպ պատասխանել ցանկացած իրավիճակի:

- Զ. **Կիրքը** մտածելու մեկ այլ բացասական օրինակ է: Հիսուսը Մատթեոս 5:27-28-ում ասաց, որ դա մեղք է:
- Է. Անդրադարձի՛ր Բանալի համարին և բացատրի՛ր, որ մենք կարիք ունենք մտածելու *Աստծո Խոսքի* վրա:

6. Անցկացրո՛ւ Գ-2. կետը. «Ո՞րն է անգիր անելու և մտածելու միջև եղած տարբերությունը» (3-5 բույս), Ուսանողի ձեռնարկ, էջ 36-րդ:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են անգիր անելու և մտածելու միջև եղած տարբերությունը: Մատնանշի՛ր, որ մտածելը միանշանակ ավելին է, քան ընդամենն անգիր անելը:

7. Անցկացրո՛ւ Գ-3. կետը. «Ինչո՞ւ էս պետք է մտածեմ Աստծո Խոսքի շուրջ» (3-5 բույս), Ուսանողի ձեռնարկ, 36-37-րդ էջեր:

Աստծո Խոսքի վրա մտածելու օգուտների մասին քննարկելիս օրինակներ՝ բեր նաև քո կյանքից, թե ինչպես է դա քեզ օգնել: Դու կարող ես ժամանակ հատկացնել, որպեսզի ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 36-37-րդ էջում նշված համարները:

8. Անցկացրո՛ւ Գ-4. կետը. «Ինչպե՞ս կարող եմ մտածել Աստծո Խոսքի շուրջ» (5-10 բույս), Ուսանողի ձեռնարկ, 37-39-րդ էջեր:

Ա. Արագ ներկայացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի 37-39-րդ էջերում շարադրված մտքերը:

Բ. Բացատրի՛ր, որ պետք է մտքում պատկերացնել, թե ինչպես դու կվարվեիր, եթե անելու լինեիր այն, ինչ Աստվածաշնչի տվյալ համարն է ասում քեզ, որ անես:

Գ. Մտածելու ընթացքը պետք է հեշտությամբ կապվի Դաս 1-ինի՝ *«Ամենօրյա քրիստոնեական աճի պատկեր»* աղյուսակի հետ: Բացատրի՛ր, որ նրանք կարիք ունեն մտածելու այն համարների շուրջ, որոնք նրանց կօգնեն կողմնորոշվել սթրեսային իրավիճակներում՝ այդ սթրեսային իրավիճակները նորից ու նորից մտքում կրկնելու փոխարեն:

Դ. Վերցրո՛ւ մի համար և նկարագրի՛ր, թե ինչպես կարող է օգտագործվել **մտածելը**՝ այդ համարը կյանքի առօրյա իրավիճակներին կապելու գործում:

Ե. Մատնանշի՛ր, որ այդ մտածելը կամ մտահայելը նման չէ արևելյան կրոնների նկարագրած՝ խորասուզված մտահայելուն:

9. Բացատրի՛ր, թե ինչպես պետք է սկսել մտածել Աստծո Խոսքի վրա (5-10 րոպե):

- Ա. Սկսի՛ր շատ կարճ ժամանակով:
- Բ. Մտածի՛ր այն մասին, թե ինչպես կկիրառեիր այդ համարը քո առօրյա կյանքում:
- Գ. Փորձի՛ր դա անել օրվա մեջ մի քանի անգամ:
- Դ. Փորձի՛ր համարն ավելի ու ավելի հաճախ համադրել քո առօրյա գործունեության հետ, որպեսզի այն դառնա քո օրվա սովորական մասը:
- Ե. Մտածելու հիմնական նպատակներից մեկը ձևեր գտնելն է, թե ինչպես համարները կիրառես քո առօրյա կյանքում:

4

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են համարներն անգիր անելու և դրանց շուրջ մտածելու տարբերությունը: Համարներ անգիր անելը հեշտացնում է դրանց շուրջ մտածելը: Բայց և այնպես, պարտադիր չէ անգիր անել համարը՝ նախքան դու կկարողանաս դրա վերաբերմամբ մտածել: Որպես մտածելու մի ձև՝ դու կարող ես կարդալ համարը և անմիջապես սկսել մտածել դրա մասին:

10. Օգտագործել Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդը մտածելու ժամանակ (5-10 րոպե):

Թող քո ուսանողները ցույց տան իրենց հանձնարարված աշխատանքն Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդի վերաբերյալ, որը դու նրանց հանձնարարել էիր անցած դասաժամին: Թող նրանք կիսվեն իրենց պատասխաններով, որոնք սովել են Աստվածաշնչի ուսումնասիրության այս նախագծի բոլոր երեք բաժիններին: Ավարտի՛ր Քայլ 1-ինի վերաբերյալ ձեր քննարկումը՝ նախքան Քայլ 2-րդին անցնելը:

Նրանց ուշադրությունը հրավիրի՛ր նրանց հայտնաբերած այն մտքերի վրա, որոնք ուսանողներից մեկն ունեցել է, իսկ մյուսը կամ մյուսները՝ ոչ: Օգտագործի՛ր այս հանգամանքը՝ նշելու համար, որ նույն համարից կարելի է բազմաթիվ տարբեր մտքեր և հարցեր սովորել: Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդն օգտագործելիս նրանք կարող են 25-ից մինչև 60 տարբեր մտքեր և հարցեր ունենալ՝ ստացված միևնույն համարից:

Նաև նշի՛ր, թե ինչով է Աստվածաշնչի ուսումնասիրության այս մեթոդը նման «Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերին», որը քննարկել ենք սույն դասընթացի 2-րդ գլխում:

Հարցեր Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդում:

Երբ ուսանողները գրեն իրենց հարցերը, ասա՛ նրանց, որ ուշադրություն դարձնեն, թե ինչպիսի հարցեր են իրենք գրել: Արդյո՞ք նրանք ավելին են փնտրում, քան ընդամենը փաստեր տվյալ համարներից (սրա համար որպես օրինակ՝ տե՛ս Ուսանողի ձեռնարկի 29-րդ էջում զետեղված օրինակի 7-րդ հարցը):

(7) Ինչո՞ւ Հիսուսը բժշկված բորոտին ուղարկեց քահանայի մոտ:

Նրանք ունե՞ն հարցադրումներ, թե ինչպես կարող են այս համարը կիրառել իրենց կյանքում: (Սրա համար որպես օրինակ՝ տե՛ս Ուսանողի ձեռնարկի 28-րդ էջում զետեղված օրինակի 2-րդ հարցը):

(2) Ինչքա՞ն հաճախ եմ ես Աստծուց պահանջում՝ ինչ-որ բան անել:

Քաջալերի՛ր նրանց, որ գրեն հարցեր, եթե անգամ գիտեն դրանց պատասխանները: Թող նրանք գրեն այնպիսի հարցեր, որոնք իրենց ընտանիքի անդամները կարող էին ունենալ տվյալ համարի վերաբերյալ:

Անձնական կիրառություն Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ նախագծում:

Գրատախտակի կամ թափանցիկ սլայդի վրա գրի՛ր անձնական կիրառության մի քանի մտքեր, որոնք քո ուսանողները նշել էին իրենց աշխատանքներում: Դրանցից մի քանիսը գրելուց հետո ժամանա՛կ հասկացրու՝ մատնանշելու համար անձնական կիրառության բազմազանությունը, որը քո ուսանողները տեսել են աստվածաշնչյան տվյալ համարի այդ մեկ հատվածում:

Ամփոփելիս ընդգծի՛ր կարևորությունը՝ նորից անցնելու այս նույն համարին և ավելի շատ մտքեր ավելացնելու ԱՀԱԿ մեթոդի երեք բաժիններում: Եթե նրանք մտածեն տվյալ համարի շուրջ և խորհեն, թե ինչ ազդեցություն է այն ունենում առօրյա կյանքում իրենց հանդիպած խնդիրների վրա, ապա կտեսնեն, որ Աստված նոր մտքեր, նոր հարցեր և նոր անձնական կիրառություններ է ցույց տալիս նրանց:

11. Ինչպե՞ս է Սուրբ Հոգին մեզ օգնում մտածելու հարցում (1-4 բույլ):

Մտածելը Սուրբ Հոգուն մեր մտքում գործելու հնարավորություն է տալիս: Մովորի՛ր լսել Սուրբ Հոգուն, երբ մտածում ես: Քո ստացած ցանկացած նոր, լավ մտքի համար շնորհակալություն՝ ևն հայտնի՛ր Նրան:

12. Նախագիծ 5-րդ և 6-րդ:

Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 5-րդը՝ «Համարի ուսումնասիրություն», և Նախագիծ 6-րդը՝ «Փնտրել Աստծուն», կարող են օգտագործվել այս դասի հետ, կամ էլ, ըստ քո ցանկության, լրացուցիչ դասաժամի հետ: Աստվածաշնչի ուսումնասիրության այս երկու մեթոդները հեշտ օգտագործելի են և, հուսով ենք, գործնական օգուտ կտան քո ուսանողներին: Եթե դու քո սովորական դասաժամին դրանք քննարկելու ժամանակ չունես, ապա կարող ես ծրագրել՝ այդ մեթոդների վերաբերյալ առանձին քննարկում անցկացնել Աստվածաշնչի ուսումնասիրության կամ հաջորդող հոգևոր ծառայության ժամանակ: Եթե այդպես անելու լինես, թող նրանք լրացնեն նախագիծը, իսկ հետո հավաքվեն միասին և քննարկեն իրենց ուսումնասիրության արդյունքները:

4

13. Անձնական կիրառություն (7-10 րոպե):

Այսօրվա Անձնական կիրառության համար քո ուսանողները թող դասարանում մտածելու ժամանակ հատկացնեն իրենց սիրելի համարի վրա: Եթե նրանք սիրելի համար չունեն, թող ընտրեն ինչ-որ մեկը, կամ էլ դո՛ւ տուր նրանց մի համար, որը, ըստ քեզ, օգտակար կլինի նրանց համար, օրինակ՝ մեկ կամ մի քանի համարներ 23 Սաղմոսից:

Թող նրանք 1-3 րոպե լուռ նստեն, նույնիսկ եթե ցանկանում են՝ աչքերը փակ, և կիրառեն այսօրվա դասին քննարկված՝ մտածելու ռազմավարությունները: Քաջալերի՛ր նրանց, որ Աստծուց մտքեր խնդրեն՝ տվյալ համարի մեջ Աստծո ճշմարտություններն ավելի լավ հասկանալու և այն իրենց կյանքի առօրյայում պիտանի դարձնելու համար: Դու կարող ես նրանց ասել, որ այդ ժամանակն օգտագործեն տրված համարի վերաբերմամբ Աստծուն աղոթելու համար:

Կարող ես նաև մեկ կամ երկու ուսանողի խնդրել՝ մտածելու այս գործողության վերաբերյալ կիսվել իրենց արձագանքներով:

Նշի՛ր, որ դասասենյակային այս տարբերակը, միգուցե, լավագույնը չէ Աստծո Խոսքի վրա մտածելու համար: Եթե ուզում են այդ գործողությունը դարձնել Աստվածաշնչի իրենց ամենօրյա ուսումնասիրության անբաժան մասը, ապա պետք է գտնեն խաղաղ մի վայր, որտեղ նրանց չեն անհանգստացնի, և ամեն օր մտածեն Աստծո Խոսքի վրա:

Նաև ընդգծի՛ր, որ սովորելը, թե ինչպես մտածել Աստծո Խոսքի վրա, հմտություն է, որը լուրջ գործնական աշխատանք է պահանջում: Մենք նաև կարիք ունենք գիտակցելու, որ երբ մտածում ենք Աստծո Խոսքի վրա, միշտ չէ,

որ մեծ հայտնություններ կունենանք, որոնք Աստված երկնքից լսելի ձայնով կհայտնի մեզ:

14. Հանձնարարություններ:

Ա. Հավաքի՛ր նրանց աշխատանքները, որ հանձնարարել էր վերջին դասաժամին, և աստվածաշնչյան հատվածի վերաբերյալ Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդի գնահատակա՛ն դիր:

Բ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Բ Կորնթացիներին 8:11-ի վերաբերյալ:

15. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5.

Ստուգարք

1. Ներկայացրո՛ւ հաջորդ դասընթացը, որը պետք է անցնեք:
 - Ա. Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը կամ որևէ նախագիծ, որ պետք է ավարտված լինի նախքան հաջորդ դասընթացի առաջին դասաժամը:
 - Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր՝ Ուսանողի ձեռնարկի վերջին էջը: Նրանք Ուսուցման ուղեցույցի վերջում կգտնեն *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ օրինակ: Հայտնի՛ր նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ամսաթվերը:
 - Գ. Բաժանի՛ր նոր Ուսանողի ձեռնարկը և ասա՛ նրանց, թե որ էջերն են ուզում, որ նրանք կարդան նախքան հաջորդ դասաժամի սկսվելը:

2. Ստուգա՛րք տուր այս դասընթացի վերաբերյալ: Ստուգարքը լրացուցիչ բաժին ունի. հատուկ ներդիր՝ ի հավելումն ստուգարքի չորս էջերի: Ուսանողներին բացատրի՛ր, որ «Տո՛ւն տար ստուգարք» ներդիրն Աստվածաշնչի ուսումնասիրության հատուկ նախագծի մի մասն է, որ նրանք պետք է լրացնեն հաջորդ մի քանի օրում:

Նախքան ստուգարքն այսօր սկսելը հայտնի՛ր ամսաթիվը, թե երբ պետք է նրանք աշխատեն ստուգարքի «Տո՛ւն տար ստուգարք» ներդիրի վրա: Այդ ներդիրի վերևում կա մի տեղ, որտեղ նրանք կարող են գրել այդ ամսաթիվը: Մենք քեզ խորհուրդ ենք տալիս քո ուսանողներին երեք օր տալ՝ «Տո՛ւն տար ստուգարք» ներդիրն ավարտելու համար:

3. Հատուկ նշում այս ստուգարքին գնահատական դնելու վերաբերյալ. ստուգարքի երրորդ էջում 4-րդ հարցը խնդրում է ուսանողներին՝ գրել այդ շաբաթ տեղի ունեցած երկու տարբեր իրավիճակների մասին, երբ նրանք հնարավորություն են ունեցել օգտագործել այդ համարը: Այն նաև ասում է. «Մի՛ հորինիր օրինակներ»:

Այս հարցին պատասխանելիս նրանք կարող են օգտագործել մի իրավիճակ, որտեղ, իրոք, բարություն կամ ներողամտություն են ցուցաբերել, կամ էլ որտեղ նրանք կարող էին դա անել, բայց չարեցին: Երկու իրավիճակներն էլ հարմար են, որպեսզի գնահատական ստանան իրենց պատասխանի համար: Գլխավոր պատճառը, որ մենք ուզում ենք, որ նրանք դա անեն, տեսնելն է, թե արդյոք նրանք կարողանո՞ւմ են իրենց կյանքից իրական իրավիճակներ գտնել, որոնք հատկապես կապ ունեն տվյալ համարի ճշմարտությունների հետ:

4. Եթե դեռ չես արել, վերադարձրո՛ւ այն բոլոր հարցաշարերն ու նախագծերը, որոնք դու գնահատել ես:

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Հնագանդություն մարդուն դասընթացի Ուսուցման ուղեցույցն ունի «Պատասխաններ» բաժինը մի քանի նախագծերի համար:

Ուսուցման ուղեցույցի «Պատասխանները» ներառված են հաջորդ էջից սկսած:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք
Պատասխաններ
Դասընթացի վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու
Վկայականը:

Անուն _____

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Անսաթիվ _____

Ստուգաթղթ, 5-րդ խմբագրում

Դասարան _____

_____ դասարան

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 3 միավոր).

Ցուցումներ. Դի՛ր X եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր O եթե պատասխանը սխալ է:

1. _____ Աստվածաշունչն ուսումնասիրելիս կարևոր է, որ դու հասկանաս յուրաքանչյուր համարի իմաստը:
2. _____ Համաբարբառում դու կարող ես գտնել այն վայրերի քարտեզները, որոնց մասին գրված է Աստվածաշնչում:
3. _____ Աստված ուզում է, որ կիրառենք այն, ինչ սովորում ենք Աստվածաշունչն ուսումնասիրելիս:
4. _____ Աստվածաշնչում գրված մարդկանց պատմությունն ուսումնասիրելիս կարևոր է սովորել նրանց սխալներից ու հաջողություններից, որպեսզի իմանանք, թե ինչպես կարող ենք ավելի լավ ծառայել Աստծուն:

Բազմակի ընտրությամբ հարցեր.

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և դրա համապատասխան տառը գրի՛ր դիմացի գծիկի վրա (3 միավոր):

1. _____ Ինչքա՞ն հաճախ պետք է Աստվածաշունչ ուսումնասիրես.

Ա. Ամեն օր:

Բ. Շաբաթը մեկ անգամ:

Գ. Երբ ցանկություն է առաջանում:

Կարճ պատասխանով հարցեր.

1. Ինչո՞ւ մարդը պետք է ուսումնասիրի Աստվածաշունչը: Գրի՛ր երկու պատճառ (չորս միավոր):

Ա. _____

Բ. _____

2. Ի՞նչ է անձնական պաշտամունքը (4 միավոր):

Աստվածաշնչի ուսումնասիրության նախագիծ

- 1. Խնդրում եմ, ուշադի՛ր կարդա բոլոր ցուցումները:
- 2. Օգտագործի՛ր այս համարը՝ հետևյալ հարցերին պատասխանելու համար:

Եփեսացիներին 4:32.

«Միմյանց հանդեպ քա՛ղցր եղեք, գթած, իրար ներելով, ինչպես որ Աստված Քրիստոսով ձեզ ներեց»:

- 3. Գրի՛ր այս համարը քո բառերով: Քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է այս համարն ասում քեզ (10 միավոր):

- 4. Գրի՛ր այս շաբաթ տեղի ունեցած երկու տարբեր իրավիճակների մասին, որտեղ դու օգտագործել ես այս համարը: Օգտագործի՛ր իրական իրավիճակներ (անձնական փորձառություն) քո սեփական կյանքից: Մի՛ հորինիր օրինակներ (16 միավոր, յուրաքանչյուրը 8 միավոր):

Իրավիճակ 1. _____

Իրավիճակ 2. _____

Աստվածաշնչի ուսումնասիրության նախագիծ (շարունակություն).

- 5. Գրի՛ր նվազագույնը երեք կոնկրետ ձևեր, թե ինչպես կարող ես օգտագործել այս համարի ուսուցումները հաջորդ երեք օրվա ընթացքում: Այս անձնական կիրառության նպատակները դարձրո՛ւ պարզ ու հստակ (9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր):

Նպատակ 1. _____

Նպատակ 2. _____

Նպատակ 3. _____

Խնդրում եմ, հաշվի՛ առեք.

Ստուգարքի մնացած հատուկ մասը՝ «Տո՛ւն տար ստուգարքը», համընթաց է Աստվածաշնչի ուսումնասիրության այն հատուկ նախագծի հետ, որը դու հենց նոր այս էջում ավարտեցիր: Դու պետք է արտագրես սույն էջի քո պատասխանները՝ նախքան ստուգարքի այս մասն ուսուցչին հանձնելը: Քո ուսուցիչը քեզ նաև պետք է հայտնի ամսաթիվը, թե երբ պետք է վերադարձնես «Տո՛ւն տար ստուգարքը» հատուկ մասը քո ուսուցչին:

Անուն _____

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Դասարան _____

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Ամսաթիվ _____

«Տո՛ւն տար» ստուգարք

Աստվածաշնչի ուսումնասիրության նախագիծ (շարունակելի)

Ցուցումներ.

Ներքևում գտնվող 4-րդ հարցին պատասխանելիս, **արտագրի՛ր քո** պատասխանները այս ստուգարքի 4-րդ էջի համար 5-րդից: Կարդա՛, խնդրում եմ, ներքևում գտնվող 5-9-րդ հարցերը՝ վստահ լինելու նպատակով, որ հասկանում ես, թե ինչ պետք է անես ստուգարքի այս հատվածը կատարելու համար: Այնուհետև քեզ հետ վերցրո՛ւ «Տո՛ւն տար» ստուգարքը: Ստուգարքի մնացած մասը պետք է ուսուցչին հանձնվի տվյալ պահին:

Եփեսացիներին 4:32.

«Միմյանց հանդեպ քա՛ղցր եղեք, գթած, իրար ներելով, ինչպես որ Աստված Քրիստոսով ձեզ ներեց»:

5. Արտագրի՛ր այն 3 նպատակները, որ գրել ես քո ստուգարքի 4-րդ էջում:

Նպատակ 1. _____

Նպատակ 2. _____

Նպատակ 3. _____

6. Նախքան հաջորդ դասաժամը՝ պատասխանի՛ր հետևյալ հարցերին:

7. Ընտրի՛ր վերևում նշված նպատակներից մեկը, որպեսզի այն կատարես այս շաբաթ-կիրակի օրերին կամ հաջորդ երեք օրերի ընթացքում:

Իմ ընտրությունը. _____

8. Իրագործի՛ր նպատակը, որը դու որոշել ես կատարել:

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
Ստուգարք 5.
Պատասխաններ

Նշում ուսուցչի համար. Համոզվի՛ր, որ ուսանողներին համապատասխան ամսաթիվ ես տվել «Տո՛ւն տար ստուգարքի» համար:

Էջ 1.

Ճիշտ – սխալ հարցեր

(յուրաքանչյուրը 3 միավոր).

1. X ճիշտ
2. O սխալ
3. X ճիշտ
4. X ճիշտ

Բազմակի ընտրությամբ հարցեր

1. (3 միավոր).
“Ա”

Համառոտ շարադրությամբ հարցեր

1. (4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր).
Անձնական պատասխաններ
2. (4 միավոր).
Առաջարկվող պատասխաններ.
Անձնական պաշտամունքն առանձին ժամանակ է, երբ դու կարող ես Աստծո հետ մենակ լինել՝ կարդալով Աստվածաշունչը և աղոթելով:

Էջ 2.

3. (9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր).
 1. Իմանալ փաստերը (տեղեկանալ):
 2. Կապել փաստերն իմ կյանքի հետ (հասկանալ):
 3. Գործողություն (Աստծո Խոսքը կիրառել իմ կյանքում):

(Նշում. Ուսանողներից չի պահանջվում գրել բոլոր 3 նկարագրություններն ամեն մի քայլի համար: Մեկ նկարագրություն մեկ քայլի համար բավարար է, որ ամբողջական գնահատական ստանան իրենց պատասխանի համար):

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
Ստուգարք 5.
Պատասխաններ

Էջ 2. *(Չարունակություն)*.

4. (4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր).
Անձնական պատասխաններ
5. (5 միավոր, առաջարկվող պատասխան).
Աստծո Խոսքի շուրջ մտածել նշանակում է՝ Աստծո Խոսքն անցկացնել մտքի, զգացմունքների և կամքի միջով և թույլ տալ, որ այն դառնա քո մի մասը:
6. (14 միավոր, յուրաքանչյուրը 7 միավոր).
Բ Կորնթացիներին 8:11 Մարկոս 4:24

Էջ 3.

Աստվածաշնչի ուսումնասիրության նախագիծ

1. ոչ մի միավոր.
2. ոչ մի միավոր.
3. 10 միավոր, անձնական պատասխաններ.
4. 16 միավոր. յուրաքանչյուրը 8 միավոր.
Անձնական պատասխաններ

Էջ 4.

5. (9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր).
Անձնական պատասխաններ

Տո՛ւն տար ստուգարք

Էջ 5.

5. ոչ մի միավոր.
6. ոչ մի միավոր.
7. ոչ մի միավոր.
8. ոչ մի միավոր.

Էջ 6.

9. 10 միավոր, անձնական պատասխաններ:

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____